Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՍՈՆԱ
ՉԱՄԲԱՐՁՈՒՄ

Գահգրահեր Գարդեր

ՍՈՆԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ԳԱՆԳՐԱՀԵՐ
ԿԱՐՈՏ

«Դիզակ պլյուս» հրատարակչություն
Ստեփանակերտ-2017

ՀՏԴ 821.19-1Համբարձում
ԳՄԴ 84(5Հ)-5
Հ 205

Համբարձում Սոնա
Հ 205 Գանգրահեր կարոտ/ Ս. Համբարձումյան.- Ստեփանակերտ: «Դիզակ պլյուս» հրատ., 2017.- 184 էջ:

«Ի դեմս արևի», «Երկու բառ ունեմ քեզ ասելու» ժողովածուներից հետո պոետն ընթերցողին ներկայանում է «Գանգրահեր կարոտ» գրքով:

Գանգրահեր կարոտը արցախցի բանաստեղծ Սոնա Համբարձումյանի /Սոնա Համբարձում/ բանաստեղծական երրորդ ժողովածուն է: Այն ընդգրկում է հեղինակի 2014-2017թթ.-ի գրած ստեղծագործությունները:

Գրքում իրական գույներով է արտահայտվում թե հայրենասիրական, թե սիրային քնարերգությունը:

ՀՏԴ 821.19-1Համբարձում
ԳՄԴ 84(5Հ)-5

ISBN 978-9939-1-0671-7 © «Դիզակ պլյուս» հրատ., 2017

ԳՐՔԻ ՄԵԿԵՆԱՍՆԵՐ

ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ

ՅՈՎՍԷՓ ԵՒ ԳԱՐՈԼԻՆ

ՆԱԼՊԱՆՏԵԱՆՆԵՐ

(ԼՈՍ ԱՆՃԵԼԷՍ-ՍԴՈՒՏԻՕ ՍԻԹԻ)

ՍՈՒՏՔ

Սոնա Համբարձումյանի բանաստեղծական աշխարհը նկատելիորեն առանձնանում, բայց միևնույն ժամանակ հետաքրքիր լուծումներով ընդհանրանում է արցախցի իր սերնդակից բանաստեղծների ստեղծագործությունների համատեքստում:

Ուրախալի է, որ Արցախն ապրում և ներկայանում է յուրաքանչյուր արցախցու ստեղծագործություններում և ուրախալի է նաև, որ Արցախը կոնկրետ մարմին ունի, որի համար մաքառում և որով ապրում է արցախցին:

Սոնա Համբարձումյանի պոեզիայում Արցախը ներկայանում է իրական գույներով. կեղծ ու շինծու պաթոս չկա, չկան հայրենիքի հանդեպ սիրո ներկայացման չափազանցություններ: Արցախը կենսատարածք է կյանքին հատուկ բոլոր ելևէջումներում, իսկ բանաստեղծի փափագը իր և հայրենիքի անբաժանելիությամբ է զորանում:

Սոնա Համբարձումյանի երազանքը հայրենիքի խաղաղ ներդաշնությունն է: Նա բանաստեղծական տողերում ստեղծում է իր այդ իդեալի պատ-

կերները: Նա ցանկանում է իր հայրենիքը տեսնել բնականոն, անպատերազմ ու անկորուստ զարգացման հոլովույթում, որի համար նա դիմում է արցախյան հրաշագեղ բնության պատկերավորմանը:

Սա միայն հայրենիքի հանդեպ սիրո դրսևորումը չէ, բանաստեղծը ենթագիտակցորեն ցույց է տալիս, որ իր բանաստեղծական որոնումներն էլ պետք է լինեն այդ բնականոնության մեջ և կցանկանար, որ իր գիրը ձերբազատված լիներ աշխարհաքաղաքականության պայմանականություններից: Նա ձգտում է իր և հայրենիքի միաձուլմանն ու նույնացմանը, որը զերծ կլինի կորստի և արցունքի տուրևառությունից:

Սոնա Համբարձումյանի ստեղծագործություններում հայրենասիրական քնարերգությանը զուգահեռ միշտ արտահայտություն է գտնում սիրային քնարերգությունը: Այստեղ առինքնող է բանաստեղծուհու անկեղծությունը: Սիրո դրաման իր բազմաձև դրսևորումներով ու գեղեցիկ պատկերավորմամբ չի կարող անտարբեր թողնել յուրաքանչյուր ընթերցողի: Երբեմն ասես բառը պապանձվում է նրա զգացմունքների առջև և ընթերցողին մնում է խորը, հուզական ապրումը:

ՍՈՆԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Սոնա Համբարձումյանին հատուկ է պատկերավորման միջոցների հարստությունը: Յուրաքանչյուր ասելիքի ու զգացողության համար բանաստեղծուհին կարողանում է համապատասխան ձև գտնել ու կիրառել:

Քանաստեղծության տարածությունը նրա ստեղծագործություններում չի միանշանակվում. բանաստեղծությունը մի քանի տասնյակ բանատողերի համադրությամբ կարող է լինել, կարող է նաև հասնել մինիմալիզմի և ընդամենը երկու տողը խտացնի զգացումների ու խոհերի պրիզման: Երկու դեպքում էլ բանաստեղծությունը չի տուժում:

Սոնա Համբարձումյանին ընթերցելիս հասկանում ես, որ Արցախն ապրում է իր հրաշագեղ կյանքով և որ Արցախում կյանքն իր համաչափ ռիթմի մեջ է, ուստի մի ցանկություն է առաջանում՝ թող երբեք չխախտվի Արցախի խաղաղությունը:

Սոնա Համբարձումյանի պոեզիան ինձ ստիպում է հավատալ, որ Արցախը հաղթանակել է, որովհետև այս գրի մեջ կյանք կա և Արցախում կյանքը շարունակվելու է:

Աշոտ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

***

Երկիրս,
Քանզի
Դու ավելի ներկա ես իմ մեջ,
Քան ես՝ քո մեջ,
Մի լքիր ինձ:

ԵՐԿԻՐՍ

Ես աղոթում եմ քեզ համար երկիրս,
Արյամբ սնված հողդ
Արնախում չդարձրեց մեկ,
Հողն այդ արժանի է ծաղկման,
Կյանքով հատուցած ծնողը
Վրիժառու չդարձրեց մեկ,
Ծնողն այդ արժանի է հավերժության:
Մենակ պայքարող վինվորը
Պարտվող չդարձրեց մեկ,
Զինվորն այդ արժանի է փառքի,
Մեկ հիացրեց երականքը,
Բայց մենք չդարձանք երակկոտ,
Մեկ հիացրեց խրախճանքը,
Բայց ցավի դեմ չդարձանք վախկոտ,
Եվ ես աղոթում եմ քեզ համար
Երկիրս,
Որ հաղթատոներ չավելանան
Պատմությանդ
/Հաղթանակը կորուստ է
պահանջում/,
Որ անքուն սահմանապահդ
Անժամանակ չհեռանա կյանքից..
Երկիրս, ոչ ոք, նույնիսկ դու
Չես կարող հասկանալ սերս,
Որ ապրում է քո մեջ
Ինձ համար:

ԱՅՆՏԵՂ... ԻՄ ՏԱՆԸ

Ճանապարհիս
Լեռները ձյունոտ
Հիշեցնում են ինձ տատիս
Փեշերն ալրոտ,
Ուր ես գլուխս էի դնում
Հեքիաթներ տեսնելու համար:
Ու թափ էր տալիս տատս փեշերն իր՝
Գլորելով ձյունները սարերից,
Հոսում էր ձյունը՝
Նկարելով ծաղիկներ...
Ես բացում եմ ափս,
Հոտոտում այն,
Քո բույրն արթնանում է իմ մեջ...
Գրկում եմ գիշերային
Սառնությունը,
Նրա մեջ խցկված քաղաքի շոգ
Աղմուկը,
Բամբասկոտ կանանց «խելացի»
Թվացող հայացքները,
Ես տարածում եմ թևերս իբրև
Գրկախառնություն
Եվ վերադարձ
Այն տուն,
Ուր պապս տատիս կենացն էր
Խմում,
Մայրս իմ ծնվելու լուրն էր շշնջում

ՍՈՆԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Հորս ականջին,
Ես տարածում եմ թևերս
Փրկելու համար աղյուսներն այդ
Տան,
Որ անտանիք է մնացել,
Անընկեր:
Տատիս չպատմած հեքիաթների մեջ
Մոլորվում եմ:
Աստղերի ուղղությամբ
Քամի եմ հեծնում,
Եվ ճանապարհը թվում է այն ուղին,
Որով
Հնարավոր չէ վերադառնալ:
Տարածում եմ ձեռքերս դեպի
Կարոտ…
Քայլում եմ,
Գրպաններումս պահած
Համբույրներն են քո,
Ու այգեպանը ծիծաղում է.
- Աղջիկ, որ գրպաններում
Ծաղի՞կ է աճեցնում:
Ես, բոլորս քայլում ենք
Արցունքներիդ տակ
Անձրևում է..
Այնտեղ... այդ տանը…
Մայրս ամեն անգամ բարուրս
Բացելուց
Համբուրում էր ուսերս:

Հիշողությունները խրվում են
Դատարկության մեջ...
Թվում է աշխարհը սկիզբ է
Ունենալու:
Աչքերիդ մեջ փայլում են բառեր,
Որոնք ես եմ հորինել:

Հ.Գ.
Տատս ափերն իր թաքցնում էր
Հայացքներից:
Մեռնելուց առաջ նա փակեց
Ափերը.
- Իմ տուն եմ գնում... դուք չգաք
Հանկարծ:

ԱՐՑԱԽ

Քո քարերը պիտի արևից ճաքեն,
Տղաներդ ճակատներից լոկ քրտինք
Սրբեն,
Լեռներդ իմ լեզվով պիտի
Արձագանքեն,
Հողիդ ծարավը ջրով հագեցնեն:
Խաղադաշտերում քո մանուկները
Պիտի վազվզեն
Անվախ ու անկեն,
Մարտադաշտերում
Անկոխ կանաչ խոտ,
Արոտավայրերում հովիվ, շուն և հոտ,
Ու կակաչների կարմիր պի՛տ երևա,
Եվ ոչ թե թվա:
Քո լռության մեջ լսված ձայները
Պիտի լինեն տունդարձի քայլեր,
Հրապարակներում՝
Թնդացող երգեր ու պարեր:
Որ ոչ մի մարմին, անգամ կաթիլ
Արյուն,
Չդառնա կեր գազանների կամ
Ծաղկի ավյուն:
Ի՛մ Արցախ,
Թող ծնունդները լինեն
Ծննդատանը,
Իսկ մահը հասնի հայրենի մեր տանը:

***

Լեռներում այս
Քարը ժայթքում,
Ծաղիկ է ծնում,
Լեռներում այս
Հողը ճաքում,
Երգեր է ծնում:
Այստեղ կորած մարտիկների
Ոտնահետք-փոսիկներից
Եղնիկներն անձրևաջուր են խմում,
Մրջյուններն անհայտ վայրերից
Անհայտ մարմնի գրպաններից
Հացի փշուրներ են պաշարում:
Այս լեռներում արնահոտը
Քամու տեսքով ման է գալիս,
Քնած մարդուն վտանգի մասին
Լուր է տալիս,
Լեռներից այս սեր է ժայթքում,
Դառնում ամպիկ,
Լուռ անձրևում
Իմ քաղաքում:

ՔԱՂԱՔԸ

Դու երբեք ինձ հետ չես քայլում,
Քաղա՛ք,
Դու ինձ չես լսում,
Դու միշտ այնպիսինն ես,
Ինչպես քեզ տեսնում են,
Ամենուր, քամու հետ զգում եմ
Տաք հառաչանքը կարոտիդ
Դու ինձ հետ այնպիսինն ես,
Ինչպես ես եմ հորինում, քաղա՛ք,
Եվ որովհետև կողքիս չես,
Ես ապատ թափառում եմ
Օտարության մեջ,
Կեղծ թեթևությամբ
Քարշ եմ տալիս
Հոգուս շղթաների ծանրությունը,
Թույլ եմ տալիս, որ
Աղմուկը կտրատի հիշողությանս
Խճճված ցանցերը:
Դու երբեք չես լքում ինձ, քաղաք,
Նույնիսկ երբ մրցավազքում
Վերջինն եմ հասնում,
Կամ գուցե առաջինն եմ հասնում
Պարտությանը:

24.07.2015
ՌԴ, ք. Ստավրոպոլ

ԵՌԱԳՈՒՅՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Ես դեմ եմ պատերազմին,
Բայց
Երբ դանակը սլանում է դեպի
Կոկորդդ, պետք չէ ետ շրջվել:

Ես դեմ չեմ փրկվելուն,
Խաղաղությանը,
Բայց
Երբ քո փրկությունը մի ողջ
Հայրենիք արժե,
Պե՛տք է պայքարել:

Ես դեմ եմ պատերազմին,
Բայց
Երբ դեպի լույս ենք ձգվում,
Պետք է չարաչափել անցնելիք
Խավարից:

ՁՈՀԸ

Ամեն մեռնող օր
Իր հետ որդի է տանում,
Ամեն բարձրացող արև
Փորձում է արցունք չորացնել:

ՎԵՐԱԴԱՐՁԱԾՆԵՐԸ

Պատերազմից վերադարձած պապը
Իր չերևացող ձեռքերով
Շոյում է կնոջ պատկերը՝ սև
Շրջանակում:

Պատերազմից վերադարձած հայրը
Իր չերևացող ոտքերով
Քայլում է պուրակում՝
Փոքրիկի ձեռքից բռնած:

Պատերազմից վերադարձած մայրը
Ականջներում դղրդացող
Սարսափազդու ձայների մեջ
Փնտրում է դռան մի կանգ՝
Որդիների տունդարձի:

Պատերազմից վերադարձած
Եղբայրը
Իր կույր աչքերով
Տեսնում և արտասվում է
Ավերված տան համար:

Պատերազմից վերադարձած երկիրը
Սահմանում անվերդարձ
Կորուստներ է ունենում՝
Կանխելով վերադարձը
Նոր պատերազմի:

2016թ., ապրիլ

ԱՐԵՎ ՈՐԴԻ

Սահմանին ընկած տղային

Դու գնացիր, որդի՛ս,
Եվ մորդ աչքերը բաց եղան մինչ
Արևագալ:
Դու մարտնչեցիր, որդի՛ս,
Եվ հորդ սիրտը բաց եղավ մինչ
Արևագալ...
Դու անմահացար, որդի՛ս,
Եվ սիրտն ու աչքերը թաց եղան
Մինչ արևագալ:
Իմ ա՛րև որդի,
Արևագալն ուշացավ հավերժ:

11.04.2016

***

Հայրը, որդին, որդու որդին
Կյանքում կյանք են պաշտպանել,
Մահից ոգի են առել,
Արյունն էր ներկը նրանց,
Մարմինը կենդանի վրձին,
Գծել են սահման ու պատիվ
Հայրը, որդին, որդու որդին:

06. 07.2017

ԵՐԲ ԶԻՆՎՈՐԸ ԼԵՌՆԵՐՈՒՄ Է

Լեռնե՛ր, այսօր պիտի
Ես ձեզ դիմեմ.
-Չմերկանա՛ք ու չշնչե՛ք հետքը նրա,
Թող աննկատ ու նույն ճամփով
Նա հետ դառնա:
Չմոան հևքին, գարնանն ընդառաջ
Նոր ծիլ տված խո՛տ-ծաղիկներ,
Ես իմ խոսքը ձեզ էլ կուղղեմ.
-Երբ կպառկի,
Հանգիստն առնի՝ նորից ելնի
Էլ չտենչա՛ք նրա նիրհին,
Ե՛տ չկանչեք նրան կրկին,
Թող նա գնա,
Ինչպես եկել, իր գործն արել,
Թող այնպես էլ լուռ հեռանա:
Եվ դուք, քարե՛ր,
Կենդանինե՛ր անտառային,
Թռչուններ,
Բոլորդ,
Ինչ էլ լինեք նրա ճամփին,
Ծածուկ պահեք, լուռ հետևեք,
Իմաց տվեք վտանգի պահին,
Զինվորական է
Սուրբ գործ է անում,

Խաղաղությունն ու կյանքն է
Նժարին պահում,
Ինչպես եկել է,
Թող դառնա կրկին,
Կարոտ է մեկը ձայնին ու գրկին:

26.07.2017

***

Վտանգի հաղթահարումն է ծնողն
անվտանգության

Վտանգավոր է ճամփադ,
Ոչ ոք չգիտի,
Սարի հետ սար ես,
Ծաղկի հետ՝ ծաղիկ..
Աննկատ ես դու,
Բայց մտածկոտ,
Հանգիստ է մարմինդ,
Սակայն մտահոգ,
Թարթում ես անձայն,
Տեսնում ամեն ինչ:
Վտանգավոր է
Ու ոչ ձանձրալի,
Խենթերի համար բանալի-ուղի,
Ոչ ոք չգիտի
Որքան գեղեցիկ է սահմանից այն կողմ
Հեռու սահմանից,
Սպանված վախի հետ,
Անձայն անտառում,
Ուր ամեն շշուկ
Թիրախ է դառնում:
Երբ քնում է քաղաքը,
Լամպերը վառվում են,
Երբ քնում է երկիրը,
Տղերքը արթուն են:

02.04.2017

ՄԱՏԱՂԻՍՈՒՄ

Ես այստեղ եմ...
Մանկությանս հուշերի մոտ,
Որ 88-յան պատերազմի պատճառով
Խեղվեց:
Քարերը տաք-տաք գրկում են
Ոտքերս,
Եվ վազելու ցանկությունս
Արցունքվում է աչքերիս մեջ…
Ուզում եմ տատս կանչի իմ ետևից,
Պապս թարմ սերկևիլ պոկի
Տան հետևի ծառից:
Հայրս ա՛յն սարի փեշից
Մանուշակներ բերի մորս համար:
Ես ամեն ինչ եմ ուզում քեզնից
Իմ հող, իմ տուն…
Քո գրկում, ամեն անգամ,
Բերանիս մեջ
Մայրական կաթիս
Համն եմ զգում:
Հող իմ, տուն իմ,
Որ առանց իմ առաջին քայլերի,
Թոթով բառերի,
Որ առանց ինձ ապրեցիք:
Ինձ միշտ բերում ես քեզ մոտ,
Խառնում ես մտադարակներս,
Արյանս մեջ շիկացնում տարրերդ,

ՍՈՆԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Ես կարոտում եմ քեզ:
Մատաղիս, Մատաղի՜ս...
Համբուրում եմ
Արմատները քո ամեն ծաղկի,
Խոնարհվում կանաչաշատ
Քարուղուդ:
Այստեղ՝ սահմանին այդքան մոտ
Այս հրաշք օրրանում,
Երեք լուռ մահարձան
Ինձ են հետևում...
-Հողը կարոտում է մշակի ձեռքին…
2016-ի ապրիլը նոր 88 էր /1988/,
Ինձ պես նորածինների համար
Նոր անդամահատ էր
Մանկության հուշերի
...
Իմ սահմանապահ հող,
Իմ կարոտալուռ տուն,
Իմ անկատար մանկություն
Իմ Մատաղիս:

13.04.2017, հինգշաբթի

ԻՄ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ

Մի օր ես կանգնեցի երկնքի դիմաց
Մեն-մենակ
Հայրենիքիս հետ
Եվ հարցում արեցի.
-Ո՞վ եմ ես...
Հողը ճաք տվեց ոտքերիս տակ
Անհատակ խորության միջից
Թևերով, անթև ձայներ էին
Սավառնում,
Ու լսեցի իմ նախապապի աղոթքը,
Ով
Ոտքով կտրել-անցել է Արցախի
Բոլոր
Ճանապարհները՝
Եկեղեցիներում շարականներ
Երգելու համար..
Լսեցի պապիկիս հառաչանքը,
Երբ որբ պատանի էր
Նրան հարցրին. «Ի՞նչ է քո
Ազգանունը»
-«Հայ եմ, յան-ով վերջացող
Ազգանուն ունեմ»
Նրանք գրանցեցին՝
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
Իսկ իրական ազգանունը
/ԶԱՔԱՐՅԱՆ/ մնաց անհայտ:

ՍՈՆԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Լսեցի ինչպես է հենց այդ նույն
Պապս՝ Գրիգորը
Ծառերի հետ ծառ դառնում
Եվ լուռ հետևում մեղվին,
Որն անտեղյակ կերպով մատնում էր
Իր մեղվափեթակի փչակը:
Լսում եմ, ինչպես է
Նախադպրոցական հայրս իր մեծ
Քրոջ հետ
Դպրոցական դասեր սովորում,
Ինչպես է տատս գոռում
Հեծանիվ քշող հորս հետևից.
-Թարթառի ափին մոտ չգնաս,
Արևի շողերով տուն կգաս
/Այսպես նա ասում էր, երբ չէր
Ուզում որ մթին հասնես/:
Եվ լսում եմ տատիս լեղապատառ
Սուգը՝ Արա՜մ, Արա՜մ
/Նա կորցրեց տասնյոթամյա իմ
Հորեղբորը՝
Թուրք ընկերների ձեռքի գործն էր/
Ամեն ինչ փուլ եկավ
Ընտանիքիս հոգիներում...
Հայրս որոշեց դերասան դառնալ,
Նա խաղաց իր առաջին
Դերը՝ Շահ Աբաս/չարչի/
Հ.Թումանյանի «Թագավորն ու
չարչին» բալլադում

Ես շարունակեցի լսել անդունդում
Թափառող ձայներին,
Լսեցի մորս հեգնական քմծիծաղը,
Երբ ընկերուհիները պատմում էին
Իրենց սիրահարվելու մասին:
-Սերը չխոստովանվող պիտի լինի,-
Ասում էր մայրս,
Երբ իմ մայրը չէր…
Այսպես բազմաթիվ ձայներ
Հարսանեկան նվագներ,
Օրհնանքներ…
1988-ն էր, երբ արցախցիները
Բռունցքներով միացում էին
Գոռում,
Ձայների մեջ լսեցի քրոջս
Հետծննդյան լացը...
Գրիգոր պապիկիս մարմինն է՝
Ավտովթարի հարվածից իջնում է
Գետնին.
-Լավ է առաջնեկիդ տեսա տղաս..
Տատս անընկեր մնաց…
1990-ի վերջերն էր, երբ
Արցախցիները պայքարում էին
Անկախության համար
Եվ ես լսում եմ իմ հետծննդյան
Լացը…
Մորս վախեցած սրտի զարկերն էին,
Երբ

ՍՈՆԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Հայրս նոնակը ձեռքին սպասում էր.
Եթե մեքենան է գալիս՝ ընտանիքին
Տեղափոխում էր,
Եթե թուրքերն են մտնում
Մատաղիս՝ պայթեցնում էր...
Մենք հեռացանք գյուղից՝
Ոտաբոբիկ...
Իսկ հայրս աչքերի լույսով վճարեց
Իր հայրենիքի պաշտպանության
Գինը:
Այս անվերջանալի ձայները բոլորիս
Սրտերում էլ կան
Մնում է միայն գտնել ու լսել:
Կյանքի այս մեծ գրքում
Յուրաքանչյուրս մեկ ապատ էջ
Ունենք,
Եվ մենք գրում ենք այնտեղ այնպես,
Ինչպես կարող ենք:
Մենք անկարող ենք վերադառնալ,
Որովհետև մարդն ի ծնե
Լքում է իր
Ամենաապահով վայրը՝
Մոր արգանդը՝
ԱՆՎԵՐԱԴԱՐՁ:
Ժամանակի հետ
Ամեն ինչ կորցնում ենք:

ԵՍ ԵՐԿՆՔԻՑ ԵՄ

Երկիրն ապրելու համար չէ:
Անունները կրկնում են իրենց
Կրողների ճակատագրերը…
Ես երկնքից եմ հայտնվել
Եվ սիրտս թողել եմ այնտեղ:
Հոգիս պիտի բարձրանա նրա՛
Հետևից:
Ես երկնքից եմ եկել
Եվ չեմ հարմարվում երկրային
Կյանքին,
Դրա համար նախընտրեցի
Տղայիս երկրային կյանք տալ:
Ես երկնքից եմ իջել
Եվ ամեն առավոտ ծլվլում եմ
Թռչունների հետ…
Երկինքն ապրելու համար չէ:

ԻՄ ՄՈՒԹԸ

Սիրում եմ մութը …
Նա տեսնում է ամեն ինչ.
Քեզ, որ կողքիս չես,
Դողը, որ իմ ներսում է,
Քո մերկությունը,
Արցունքներդ,
Իմ չարությունը,
Կարոտը,
Ժպիտներս…
Սիրում եմ մութը,
Նա տեսնում է ամեն ինչ,
Նա թաքցնում է ամեն ինչ.
Աստղերի դանդաղ անհետանալը,
Ծաղիկների սեթևեթանքը,
Հողի անհանգստությունը,
Մոլորակի վազքը՝ անհեռացող…
Նա տեսնում է՝ ինչպես է արևն
Ամոթից շիկնում, երբ
Ճառագայթները ձգում է տանիքներից
Վար,
Ճյուղերի արանքներից,
Փակ պատուհաններից այն կողմ,
Ճեղքում անցնում է մարդկանց
Մարմիններով և
Դողում սառնությունից նրանց:

Մութը լույսի բացակայությունը չէ
Միայն,
Եթե չլիներ մութը,
Չէինք հասկանա լույսի
Ներկայությունը,
Մութն է ծնում ամենավայրի ու
Ամենանուրբ
Ցանկությունները,
Մութն այն պահն է,
Երբ երկինքը հաճույքից փակում է
Աչքերը:

ԲԱՌԸ

Հոգու բարձունքից
Սուրաչքը պոկվում է՝
Կտցին կույգ թևերով երիցուկ,
Հասնում մարդկային լեզվին,
Վերափոխվում, դառնում բառ:
Թռչուններն էլ
Բառ են դառնում,
Բառադրում են բառաբներում…
Եվ ծաղիկները երկինք են հասնում՝
Բառերի կտուցներին …
Կծում եմ լեզվակը ծաղկի,
Իսկ թռչունը ծվծվում է
Մատներիս արանքում:

ԻՄ ՕՐԸ

Օրը ջարդվել է կարոտից,
Ձանձրույթը սարդոստայն է
Հյուսում,
Անհայտ ձայները
Ծանոթ լուր են շշնջում
Օրվա ականջին...
Սառը աչքերդ կոտրում են
Մենությունս,
Թվում է՝ այս անապատը միայն
Ես եմ տեսնում...
Կարոտը անխախտ է մնում օրերի
Վակքում,
Ձանձրույթը շարունակ
Սարդոստայն է հյուսում
Օրերիս արանքում:

11.01.2017

ՕՐԸ

Օրը ջրի կաթիլ է լուսամուտին,
Օրը ստորագրություն է
Հիշողությանդ լավագույն էջին,
Օրը համարձակություն է՝ թռչելու
Օդապարիկով,
Եվ պատճառ՝ այն կործանելու,
Օրը ականջիդ բլթակից կախված
Ծանրություն է,
Որին ոչ ոք չի հավանում
Օրը աչք է, հայի փշուր,
Որին վախենում ես մոտենալ՝
Կմտածեն կույր է…
Օրն անցում է առանց հետ նայելու:

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԳՈՒՅՆԵՐ

Գիշերային գույները
Շրթներկվում են տաք շուրթերիս,
Ես լիզում եմ դառնահամը,
Անգույնը...
Քայլում եմ փողոցով
Ու թվում է տերն եմ այս խավարի
Տերն եմ անհունի,
Տերն եմ գույների.....
Քայլում եմ,
Ինքնավստահությունս աճում է,
Ծանրանում,
Տերն եմ լռության
Եվ խոսքի, որ երբեք չի լռում:
Փողոցները քնում են
Ոտնաձայներիս ներքո,
Մուրացկանները կեղծ
Քվեաթերթիկներով ծածկվում են
Քնելուց առաջ,
Մեքենաները չքանում են...
Հաստափորը սիրուհուն գրկել
Անդունդ է փնտրում,
Զվարճասեր պատանիները
Մայթեզրերին նստել
Թերթ են կարդում…

Գիշերային գույները քամվում են
Քաղաքին,
Ներս են խուժում,
Խժռում և
Հեռանում են
Առանց հաճույքի կաթիլների:
Քայլում եմ փողոցով:
Վաղը գրեթե նույն ժամին
Այստեղ կլինեմ:

ՔՈՒՆԸ

Երբ քնում է մարդը,
Նա կորցնում է գիշերային ժամերի
Վայելքը,
Երբ քնած են մարդիկ,
Քաղաքն արթնանում է
Եվ խաղաղ զրուցում աստղերի հետ:
Արթնացած քաղաքի գրկում
Մարդիկ վայելում են ժամանակի
Հրաշքները:
Նրանք, ովքեր շփոթում են քունը և
Վայելքը,
Ամբողջ գիշեր գլուխները կախած
Ներողություն են խնդրում
Անցորդներից:

06.08.2016

ԳԻՇԵՐԱՅԻՆ ՄԻՐԱԽԱՂ

Մառախուղը խարխափելով
Սահում է մութի մեջ,
Մառախուղը շոյում է լույսի
Բացակայությունը:
Շշուկները խառնվում են իրար
Երկնային վարագույրները
Բացում են բեմը,
Գրկախառնություն ու
Համբույրներ,
Բոլորն արբում են հաճույքից...
Ծաղիկները փակում են աչուկները,
Թուլանում են տերևիկները,
Եվ ցողը ներծծվում է նրանց մեջ:
Հրեշտակների ճախրանքից պոկված
Մի թեթև, տաք քամի շրջում է
Քաղաքում, տանիքներից վեր...
Եվ այնտեղ, ուր վաղուց լույս չկա,
Սրտի զարկերն են՝ համահունչ
Ձայների,
Լույսը ձգվում է
Կարոտից մինչ սպասում,
Մառախուղն անհետանում է,
Փաստերն իրականություն են
Վերադարձնում,
Երազը հայտնվել չի հասցնում:

20.06.2015

ԻՆՉՊԵՍ ՈՉ ՄԻՇՏ

Պատը ճեղքել է լռությունն իր
Ու տեսողության օպտիկ-թիթեռները
Շշնջում են գարնան ականջին.
- Տերև... փաթիլ... ծաղիկ...
Առուն ճեղքել է աղմուկն իր,
Ու երակներս ամպեր են
Կտցահարում:
Ձյունը ճեղքել է սառնությունն իր,
Եվ երկիրն է արտասվում դեպ
Երկինք,
Եվ ծաղիկը հողին է բացվում
Արմատները խրելով ամպերի մեջ…
Հարապատ վայրերը կորցրել են
Քայլերը հետդարձի,
Տունը խեղդում է մարմինս,
Դրսում ճահիճ է,
Քնելը՝ վտանգավոր,
Արթնանում ես, պարզվում է՝
Այնտեղ ես, ուր չես քնել:
Լույս չկա ընթացքի մեջ,
Նետված դանակներն
Անթիրախ են մնում:

ՄԵՆՈՒԹՅՈՒՆ

Ես մենակ մնացի լույսերի մեջ,
Ինչպես խավարում: …
Քեզ համբուրելու ցանկությունս
Այնքան մեծ էր,
Համբուրելու կարոտս այնքան
Անհագ,
Որ կծեցի ուսդ արյունոտելու չափ…
Եվ քարացավ ամեն ինչ,
Ինչպես գոլորշու հետևից մնացած
Նստվածք,
Ինչպես թռչնի այն կմախքը,
Որ թռիչքի սխալ հաշվարկի
Կամ գուցե ցանկանալով
Խրվել էր ժայռաբեկորի մեջ ու
Ժայռացել…
Ես լրիվ մենակ մնացի
Իմ մենության մեջ,
Խառնվեցի նրան…
Դու չնկատեցիր:

03.07.2015

ԻՆՁ ԶՍՊԱՇԱՊԻԿ ՄԻ ՀԱԳՑՐԵՔ, ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ ՁԵԶ

Կապույտ քարերի մոտ
Դեղին կետ կա,
Ուզում եմ
Իմ օտարությունից
Անծանոթ շները հաչեն:
Մահը սովերեցնում է
Սերմի փոխարեն մարմին թաղել
Հողում,
Որ անբողբոջ քարերից այն կողմ
Ոչ ոք չժպտա:
Մահը սովորեցնում է
Վախենալ ժամանակից:
Գոնե հիմա լսեք ինձ,
Հիմա էլ հո՞ չեմ գոռում,
Ճակատագիրը գետ է՝ անթիվ
Վտակներով,
Որոնցով անում է մեկ ու
Տանում է նույն հոսքով:
Բոլորս վայրկյաններ ենք
Կուտակում
Վայելելու համար,
Ու նրանք գալիս են այնպիսին,

Ինչպիսին որ մենք էինք պահել:
Քնելուց հետո, արթնանալուց առաջ
Ես մեղու եմ,
Կապույտ ծաղիկների
Ամաչկոտ դեղինից նեկտար եմ
Հավաքում:
Մահը շարունակ սովորեցնում է
Ներողամիտ լինել,
Լինել անհիշաչար,
Եվ մենք այդպիսն ենք
Մահվան հետ միայն:
Կապույտի մեջ
Դեղին կետ կա,
Երբեք չջնջեք դեղինը կապույտից:

ՍԱՐԴՈՍՏԱՅՆԻ ԼՌՈՒԹՅՈՒՆ

Սիրել ու չսիրել քեզ
Կարող եմ,
Իսկ ես սիրում եմ, երբ
Անկարող եմ չսիրել:

1.
Լռությունը սարդոստայնի պես
Փռվում է բառերիս վրա,
Կարոտս սարդանում,
Ուտում է վրույցս՝ անհնչուն,
Ձգում է մարմինս,
Եվ աչքերս ընդդիմանում են հոգուդ
Թափանցմանը…
Դու հեռանում ես... լքված:
Ես շարունակում եմ լինել:
Մոռացված ծաղկամանն
Անտարբեր նայում է
Ապակե տարայի ծաղիկներին:
Երբ հոգիդ խաղաղ չէ,
Մարմինդ չի կարող գեղեցիկ լինել:

2.

Գրկում ու փակում ես աչքերդ,
Ես փորձում եմ մերկ մարմնիդ վրա
Գտնել կոճակներ,
Բացել ու թաքնվել ներսումդ:
Կարոտը մամուռի պես
Ուտում է ինձ,
Կարոտը հագել է ինձ՝ բացելով
Կոճակներս:
Վաղը ջուր կուղարկեն քեզ
Փոքրիկ սափորի մեջ,
Օվկիանոսի ջրից, ուր այսօր
Կմտնեմ լողալու
/ես լողալ չգիտեմ/
Սափորիկը կթաքցնես
Կոճակներիցդ ներս:

ՈՒՐԻՇ ԳԱՐՈՒՆ

Թանձր նայվածքդ լուսաշողեր է
Դառնում իմ հեռացումի…
Ոտնաթաթերիս փոխարեն
Ծաղկաթերթեր են,
Հիմա բոլորից լավ գիտեմ անտառի
Ճանապարհը,
Աղբյուրներից ծաղկած քարերի,
Նեկտարաշատ առէջների սլացքը,
Թարթիչների հանդիպման
Հաճախականությունը,
Երբ գտնում ես լաբիրինթի ելքը,
Կամ
Անկյունն այն, որ փնտրելուց լավ է…
Ոտնաթաթերիս փոխարեն
Ծաղկաթերթեր են,
Եվ մարդիկ ծիծաղում են՝ իրենց
Նման չլինելուս
Եվ խելագար չլինելուս համար:
Նշանակություն չունի,
Ես վերադառնալու եմ
Աստղերի մոտ:

ԱՇՈՒՆ

Երբ կապույտ չէ,
Գույների մեջ պակասում է ինչ-որ
Սպիտակ,
Աչքերիդ մեջ եզրագծվում-
Կաթիլանում
Գտնում հսկա բեկորները տերևի,
Որից բացակայում է ծառը…
Երբ կանաչ չէ,
Բառերի մեջ պակասում է ինչ-որ
Կարմիր,
Երկրի անհայտ բևեռներից
Կարմիր ճաքեր են հայտնվում,
Տարածվում
Ու մենք անընդհատ գույների
Պակաս ենք տեսնում
Անհետացող եղանակների
Հիշողությունների,
Զգացումների ու հեռուների մեջ…
Երբ դեղին է,
Համբույրիդ մեջ ինչ-որ գույն է
Պակասում՝
Անանուն:
Աշուն է…
Չկան անունները ստեղծված
Գույների,
Աշուն չէ,
Տողերն ամպերից սպիտակ են
Կաթում:

ՀԵՌԱՑՈՒՄ

Հեռանում են…
Հեռանում է ծովը նավից:
Հոգնած աչքերը կապույտ են
Տեսնում,
Փաթաթվում են խարիսխին ու
Իջնում՝ անհետք դրոշմ դնելով
Ծովահատակին:
Սլաքները հեռանում են…
Հեռանում է երկինքը լույսից:
Քաղաքը հեռանում է երկրից…
Հեռանում են երկար ու անբառ
Զրույցները:
Հեռանում է սիրտը վարկերից…
Դուռս ծեծում են հեռացող,
Անհնչուն ձայներ:
Հեռանում եմ դռնից…
Բացում եմ:
Հեռանում են գրքերս՝
Անստորագիր,
Գրիչներս՝ ջարդված փորիկներով,
Թղթերս՝ օտար ձեռագրերով,
Հեռանում է դատարկը, սինը:
Քունը ծովից,
Ծովը դռնից,
Դուռը լույսից,
Լույսը քարից,

ՍՈՆԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Քարը մարմնից,
Մարմինը ջրից,
Ջուրը կապույտից,
Կապույտը երկնքից,
Հեռանում են…
Հեռանում է նավը:

20.07.2013

ԲԱԶՄԱՆԿՅՈՒՆ

Սիրո՞ւմ ես, ուրեմն շատ ես սիրում:
Մեծ սերը մեծ կործանում է
Ունենում իր ստեղծողներից միայն:
Կույրս ես, ուրեմն
Տեսնում ես ամեն ինչ:
Կարոտում ես՝ կորուստի վախի
Ներկայություն կա:
Չե՞ս ներում՝ կանխում ես
Սխալվելու հնարավորությունը…
Երբ սխալվում ես՝ ներում ես
Որոնում:
Լռում ես՝ ասելիք ունես…
Խեղդում ես ցավը, իսկ նրանց
Թվում է՝ ծիծաղում ես:
Չես հետևում նախանշաններին՝
Կործանվում ես անորոշությունից:
Եթե խաղ չէ՝ հաղթելն անհնար է:

ՔԵԶ

Հոգիս
Ծծնված երկվորյակիդ ոգին է,
Ես նման եմ քեզ այնքանով,
Որքանով
Այք տարբերում են մեզ:
Սիրում եմ,
Բայց երբ չես հավատում,
Այն ինձ կեղծ է թվում:
Հոգիս մարմնիդ հետ ծնված
Անմարմինն է,
Եվ մենք նույնն ենք՝
Ժամանակի հոսքն է այլ:
Սիրում եմ հոգիդ:

Հավատաս, չհավատաս,
Զգում եմ, որ անձրևելու է,
Ու չես տեսնելու աչքերիս
Թացությունը,
Քամին
Ոչ գնալիս է տեղն ասում, և
Ոչ էլ գալիս՝ բարևում,
Քամին միակն է՝ աչքերիցդ հետո,
Որ կարողանում է անցնել իմ
Ներսով:

ՍԱՐՍԱՓԵԼԻ ԶԳԱՑՈՒՄ

Գողացան աչքերս,
Եվ նրանք
Ապրեցին առանց ինձ:
-Դավաճանություն է:
Մտա մարմնիցդ ներս,
Քո աչքերով նայեցի,
Նրանք էլ ինձ պես փայլ ունեին:
-Դավաճանություն է:
Նկարեցիր ուսերս,
Կուրծքս՝ խրված մարմնիդ մեջ,
Իսկ նրանք նկարի մեջ իրենց
Հիշեցին:
Վերնագրեցիր՝ անվերնագիր:
-Դավաճանություն է:
Իմ վերմակի տակ այլոց բառերի
Ջերմությունն ես արտաշնչում:
-Դավաճանություն է:

ԿՅԱՆՔԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Կինը հողն է:
Հողի վրա է մեր ամեն շինվածք:
Մարմնով հողինն ենք,
Բայց կնոջ ծինն ենք:
Հողը կինն է…
Վառվող ցավից ճաքճքվող է,
Տանջվող վշտից սիրտն իր լցնող,
Բայց լռող է:
Ամեն բարիք ստեղծող է,
Բայց ծաղկի հետ
Փուշ ծնող է:
Կինն էլ հող է:
…
Մարդը ծառն է:
Ճյուղավորվում,
Պտղավորվում
Դեպ անհասն է միշտ ձգվում…
Ծեր կամ ջահել է գուցե ընկնում,
Արմատները նրա չեն անհետանում,
Նոր ծիլ են տալիս,
Նոր ծին է գալիս
Ճյուղավորվում,
Պտղավորվում,
Սլանում է դեպի երկինք.

Նախնի կյանքը
Գիծ է դառնում
Մարմնին նորի
Նախնի գիծն է նորի ճամփին
Բացում ուղի …
Ծառը մարդն է,
Մարդն էլ ծառի պես է ապրում:

Հ.Գ.
Գաճաճ բալենու երակկոտ ծիլը
Չի կարող տեսնել
Հսկա կաղնու տեսած երկինքը:

ՏԽՐՈՒԹՅՈՒՆ

Հիմա
Երակներս միակ վայրն են,
Ուր
Հանդիպում եմ սիրելիներիս…
Իրականությունս բանտ է,
Ուր
Ժպիտները չեն հանդիպում ինձ…
Եվ եթե ես համարձակություն
Ունենամ,
Մթության մեջ
Չեմ փակելու աչքերս, որ քնեմ,
Մենության մեջ
Չեմ փակելու պատուհանս, որ
Չընկնեմ:
Եթե համարձակություն ունենամ
Չեմ խեղդվի ստերից,
Կգամ՝ առանց վախենալու,
Որ ուշ կլինի:
Ես վախկոտ չեմ,
Բայց հիմա
Վախենում եմ լինել համարձակ:

ԱՆՀՈԳԻ

Ինչպե՞ս ապրի մարմինն իմ
Երբ համբուրվող շուրթերն այլևս
Անեծքներ են բարձրաձայնում:
Երբ փաթաթվող մատները
Ձենքի ձգան են սեղմում:
Երակոտ աչքերը
Արցունքներ են թաքցնել փորձում:
Ինչպես ապրի մարմինն իմ
Առանց հոգու...

ԴՈՒ ԳԻՏԵՄ՝ ԴՈՒ ՈՎ ԵՍ

Դու ոչ կորսված հայրենիքս
Վերադարձնելու
Երաշխիքն ես,
Ոչ էլ Արարատ բարձրանալու ուղիս,
Քեզ հաճոյանալու տխուր
Պայքարին
Ակամայից մասնակից եմ դառնում՝
Մտածելով՝
Դու ոչ նահատակներիս
Կենդանություն պարգևող
Արալեզն ես,
Ոչ էլ ինքնահաղթահարման ուղիս:

ՀՈԳԻՍ

Վախենում եմ քնել առանց քեզ,
Գիշերն այնքան փշեր ունի՝
Կծակծկեն
Մարմինն իմ, մարմինը քո:
Իմ երազ,
Վախենում եմ արթնանալ քեզնից՝
Կկորչի
Ժպիտն իմ, ժպիտը քո:
Իմ սար,
Քեզ բարձրանալու համար
Համբույրներիցդ պարան եմ
Հյուսում
Եվ մատներով քո տաք
Հրում եմ քարերը ճամփիս՝
Տեսնելով, որ
Ծաղիկն իմ
Քո մեջ է արմատներ ձգել:

Հ.Գ.
Անգույն է գիշերն առանց քեզ,
Ինչո՞ւ քնել,
Երբ արևածագը միասին չենք
Դիմավորելու:

04.01.2017
ք. Ստավրոպոլ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Այո,
Դատարկ է մարմինն իմ
Առանց աչքերիդ,
Փոքր է տարածքը,
Խեղդող, անօդ,
Լսելի չէ ոչինչ
Առանց քո ձայնի,
Շունչդ դռան մյուս կողմում,
Քայլերիդ կանգառ,
Մատներիդ հպում,
Ե՞րբ է բացվելու
Դուռն այս անիծյալ,
Որ ամբողջ գիշեր բաց էր,
Անկողկեք...
Այո, դատարկ է մարմինն իմ,
Առանց մատներիդ,
Մի ծարավ ունեմ,
Որ քեզնով է միայն հագենում:
Դու մի փշարմատ ընձյուղիս վրա,
Եթե չլիներ հոգին մարմնում,
Չէր լինի երկրին
Մարմինն այսքան մոտ:
Այո, մերկ եմ,
Մերկ են ծառերը,
Գարունը գարուն չէ,

Կանաչ չի բերում,
Քո հոտը չկա,
Ոչինչ չի ծաղկում:
Պոտիր, պոտիր ինձ հոգիս
Սա մեր մեղեդին է,
Կարոտի պարը:
Այո, սուրբ են պահերը
Երբ ծառա է մարմինս,
Եվ հոգին է տերը:
Բառերդ հպում,
Քո շունչը կրակ,
Դու իմն ես հոգիս,
Ես քոնն եմ միայն,
Մեր դեմ լռում է
Անգամ ժամանակը սուր,
Այո, դատարկ է մարմինն իմ
Կեղծից ու ստից
Եվ լիքն է քեզնով,
Լեցուն է հոգիս:

02.04.2017

ՓՈՔՐԻԿ ԳԱՂՏՆԻՔ

Միայնությունը հույսի հետ
Առանձնանալու պահ է:
Ուժեղ երևալն իմ միակ
Թերությունը չէ:
Արտասվելը
Միայնության հետ առանձնանալու
Պահ է:
Ես անցա բոլոր ճանապարհները,
Որոնք
Հոում էին տանում,
Հետևեցի բոլոր ընկնող աստղերին,
Որոնք
Երապանքներ էին կատարում,
Փորձեցի բոլոր քամիները, որոնք
Անհասցե նամակներ են
Հասցնում…
Եվ... ամեն անգամ սխալվեցի:
Արձակածս աղեղները
Ոչ մի խնձոր չխայթեցին:
Եվ տխրությունը դարձավ
Գույնն իմ ժպիտների:
Եվ անգոհությունը փայլեց
Իմ աչքերում:
Ես գեղեցկացա... ես դարձա
Օտար ինքս ինձ:
Քունը արթնանալու հետ
Հանդիպելու
Միակ պահն է:

ԱՎԱԳ ՈՒՐԲԱԹ

Մեղքի զգացումը
Եվայից մինչև Պետրոսի ուրացումը,
Մինչև Հիսուսի ձեռքերին
Մեխ խփող խղճուկը,
Մինչև Գուրգենին կացնահարող
Սաֆարովը,
Մինչև Սիրիայում սևապգեստ
Գլխատվողների
Հետևում կանգնած կացնավորները,
Կարմրապգեստ
Գնդակահարվողների հետևում
Կանգնած վինյալ
Պատանի-երիտասարդները,
Մինչև Բելգիայի
Օդանավակայանում երեք
Ահաբեկիչ-սպայթեցնողները,
Մինչև այն թուրքը, ով
Թիրախավորեց ու կործանեց
Ռուսական ինքնաթիռը
Եգիպտոսում,
Մինչև Թալիշում կենդանի
Մարդկանց խեղող սրիկան...
Բոլոր-բոլորն արթնանում են իմ մեջ
Եվ ես դառնում եմ հերթականը,

Գուցեն միակը,
Ով իր մեջ սպանում է
Մարդկային մեղսագործ բնապդը,
Երևակայությունը՝
Մաքրագործվելու համար:
Աշխարհն այնքան փոքր է թվում
Ինձ,
Որ այս ամենի համար
Բոլորս ենք պատասխանատու,
Ես եմ մեղավոր
Ամեն ծրագրված և
Իրագործված հանցանքի համար
Ես եմ մեղավոր, որ
Քաղաքակիրթ աշխարհում
Անկիրթ հանցանքներ են
Ավելանում՝
Կասկածի տակ դնելով
Անցյալից մինչ ապագա…
Եթե ոչ ես կամ դու, ո՞վ
Պիտի կանգնի:…
Քանի դեռ Ուրբաթ է
Մաքրե՛նք մեղքերը մեր:

ԱՄԵ՛Ն:

ԱՍՏԻՃԱՆԸ

Մի երեխա
Կյանքի աստիճան է կառուցում,
Առաջին քայլից այն ջարդվում է,
Մի պատանի
Կյանքի աստիճան է կառուցում,
Երկրորդ քայլից ընկնում է:
Մի երիտասարդ
Կյանքի աստիճան է կառուցում,
Երրորդ քայլից ընկնում է:
Մի իմաստուն
Կյանքի աստիճան է կառուցում,
Երկրից ձգում է լուսին,
Աստիճանը կարծրանում ու
Աներեր է դառնում:
Իմաստունը բարձրանում է,
Քայլում դեպի վեր,
Բայց չորրորդ աստիճանից
Գլուխը պտտվում է.
-Ծեր եմ..
Եվ նա իջնում է,
Իջնում…
Աստիճանները ձգվում են
Քարերից, ջրերից անդին
Իմաստունն անընդհատ իջնում է,
Եվ երկնքից ծաղիկներ էին կաթում
Քարերին, շիրմաքարերին…
Ու ոչ ոք չկարողացավ բարձրանալ՝
Դեպի վեր սլացող կյանքի
Աստիճանը:

ԱՄԵՆԱՔԱՂՑՐԸ

Ոչինչ այնքան քաղցր չէ,
Որքան
Մենությունը աստղերի և
Ստվերների արանքում,
Որքան սպիտակը
Համբույրի և հպումի արանքում,
Ոչինչ այնքան քաղցր չէ,
Որքան համը
Անձրևի կաթիլների և հողի
Արանքում:

09.05.2016

ՀԵՔԻԱԹ

Հորինեցի հեքիաթ
Եվ չպատմեցի ոչ մեկին,
Սակայն հեքիաթն ապրում է
Բառերի շնորհիվ,
Ապրում է ձեռքի ափով ուղարկված
Համբույրի պես՝
Թևավոր, համով, բայց
Երբեք չի իջնում
Հասցեատիրոջ շուրթերին:
Հորինեցի հեքիաթ,
Եվ նա չապրեց:

ԸՆԹԱՑՔ

Մենք լքում ենք, երբ
Թվում է չենք տեղավորվում
Այդտեղ,
Մենք լքում ենք, երբ
Թվում է՝ վերադառնալու ենք:

ՄԻ ՏԽՈՒՐ ԼՈՒՐ

Նկարիչը
Կարոտի վրձինը
Արյամբ է թաթախում՝
Հուշ է պատկերում
Օտար ափերում:
Տեսնում եմ աչքեր
Ինձ շատ հարազատ,
Որ այդ պատկերից նայում են
Անթարթ.
Որքա՜ն ժպիտներ, բառեր,
Լռություն,
Որքա՜ն համբույրներ գնացին
Անդարձ:
Իմ նկարիչը լռել է հիմա.
Ինչպե՞ս նկարել
Փայտե մի չորսու,
Տեղավորել այնտեղ սիրտն առանց
Հոգու,
Ինչպե՞ս նկարել
Քարե մահարձան,
Անուն փորագրել,
Տարեթիվ նշել…
Նկարիչը
Կարոտի վրձինը
Արյամբ է թաթախում՝
Մահ է պատկերում
Օտար ափերում:

12.02.2017

ԱՆԿԱՏԱՐ ԵՐԱԶ

Հեռու ամենքից
Ու ամեն ինչից...
Չփնտրել հոտը ջերմության...
Հեռանալ
Անգամ կարոտից...

21.02.2017

***

Եթե հոգիները գոյություն ունեն,
Ապա
Երբ փակում եմ աչքերս,
Ափերովդ ջերմացրու երեսս՝
Բառերի փոխարեն:

***

Ես այնպիսին չեմ,
Ինչպիսին երևում եմ,
Բայց այնպիսին էլ չեմ,
Ինչպիսին չերևացողներն են:

***

Պոեզիան մարդու աչքերը
Չպիտի լինի,
Չպիտի մարդու հոգին լինի...
Պոեզիան մարդու
Մարդը պետք է լինի...

***

Լույսն ինձ միշտ բռնացնում է
Խավարի հետ՝ մերկ վիճակում:
Երբեմն նախընտրում եմ
Ապրել սեղանի տակ՝
Անընկեր…
Վախենում եմ քնել առանց
Թուղթ ու գրչի,
Իսկ եթե չգա՞ս:

***

Քողարկված չէ ոչինչ
/Զգայում, արարք.../,
Ինչ-որ ժամանակ,
Ինչ-որ անկյունից այն տեսանելի է:

***

Շրթներկ գնելուց ընտրում եմ
Ամենաէժանն ու անորակը,
Մանավանդ, որ
Չեմ օգտագործելու…
Չգիտեմ, դու նկատո՞ւմ ես,
Քեկանիյ հեռանում եմ
Շուրթերիս վրա
Քո մանրապատկերները,
Որ ոչ մի թանկագին շրթներկ
Չի կարող ջնջել…

***

Գրում եմ՝
Տողերիս մեջ հայտնվում են աչքերդ,
Նայում... համբուրում մատներս…
Ես այնտեղ եմ, ուր ինձ սիրում ես,
Գրում եմ՝
Աչքերդ
Տղայիս օրորոցից հսկում են քունս,
Ես միշտ այնտեղ եմ քնում,
Ուր ինձ սիրում ես:

ՉԵՄ ՀԻՇՈՒՄ ՔԵԶ

Դյուրին է բառերով արտահայտել,
Եվ այնքան դժվար՝
Մտքերով հավատարիմ մնալ
Այդ բառերին....

***

Արտասվում եմ ափերիս մեջ,
Երբ ծարավում են ձիերդ:

***

Դու իմ պատուհանն ես,
Ես քեզ մոտ եմ գալիս ինձ գտնելու
Համար,
Մենք ամեն երեկո լուսնին ենք
Նայում...
Դու իմ պատուհանն ես,
Որ խենթությանս պահերին ամուր
Փակվում է՝
Չթողնելով ինձ նետվել:

07.11.2016

***

Կյանքում ամեն ինչ
Լուսնի պես կարող է անհետանալ
Ու հայտնվել,
Ծառերի պես տերևաթափվել
Ու տերևակալվել...
Հոգու մեջ՝ չի կարող:

***

Քո գալը
Ոչ հայտնվել է,
Ոչ էլ՝ վերադարձ:
Քո գալը
Նարնջենու ծաղկում է...
-Բարև քամի:

28.10.2016

***

Միայն ես գիտեմ,
Թե ով եմ ես,
Ինձնից բացի ոչ ոք
Չի կարող հաղթել ինձ:

***

Սիրում եմ քո հայացքը,
Այդ տեսանկյունով
Ինձ ամենահզորն եմ զգում..
Նույնն է թե խոշորացույցով
Մրջյունի նայես,
Մրջյունն էլ կուզենար
Իրեն այդքան հսկա տեսնել:

***

Չեմ կարողանում գտնել
Շղթայիս այն մեկ օղակը,
Որի պատճառով
Ամեն օր
Մի նոր օղակ եմ կորցնում:

***

Ժամանակը հախճապակե գավաթ է
Իմ ափի մեջ,
Երբեմն ես քայլում եմ
Առանց պայուսակի,
Որ չկորցնեմ այդ գավաթը:

***

Ես
Առանց քեզ
Եվ
Ես քեզ հետ
Երբեք չեմ լինելու
Այն նույն երազը,
Որ ապրել էր ուզում:

***

Ուզում եմ իմաստավոր, թե
Անիմաստ
Խոսել քեզ հետ,
Այս ամենը լռելու պես մի բան է
Եվ անկարող եմ
Լռել լռության մեջ:

***

Բառերդ կշիռ են՝
Փաթաթված ոտքերիս, որ
Հետ չգնամ հանկարծ:

15.04.2016

***

Դու թևեր չունես, երապ,
Բայց ես ամեն օր սպասում եմ
Քո թռիչքին:

***

Ամեն անգամ ապրելու ժամանակ եմ
Հորինում,
Եվ երբ հասնում եմ,
Հասկանում եմ, որ դա չէր...

13.06.2016

***

Բանաստեղծությունը
Հոգու այն բառերն են,
Որոնց մասին լռում են շուրթերը:

***

Կյանքի տարբեր իրավիճակներում
Մարդը չպիտի կորցնի իր
Մենությունը:

ՄԻՐԵԼ

Քո ամենի ամենը դառնալ,
Ձուլվել նրան
Եվ քեզ ձուլել:

***

Ամեն ոք կարող է ջրել հողը,
Բայց հողը ցանկացած ջուր
Չի խմելու:

***

Մտածեցի՝
Ինչի մասին
Դու լռեցիր…
Որքա՞ն լավն ես,
Օրեցօր մեծանում ես իմ մեջ,
Դառնում ավելի կորեղ, քան
Իմ ես-ը, ով
Մտածում է լռության մասին:

***

Տանգո,
Երբ
Գիշերը պարում է
Իմ ու քո արանքում:

13.01.2016

***

Դու
Ինձ
Իմ ներսից ես կարդում,
Եվ
Ես
Ասելու ոչինչ եմ ունենում...

11.01.2017

***

Այնպես սիրեցի, կարծես
Երբեք
Ոչ մեկին չեմ սիրել:

18.01.2017

***

Ոչ ոք,
Երբեք չի իմանա
Երգը տխուր,
Երգն այդ մոլոր,
Միայն դու ես,
Գիտես միշտ էլ
Ես եմ տխուր, ես եմ մոլոր:

***

Քո կարոտը
Միշտ ինձ հիշում,
Երակներիս այցի գալիս
Ու քո մասին լուր է տալիս:

***

Բուռն ընթացքը միշտ էլ կործանում է,
Դամդաղ ընթացքը՝ մոլորեցնում:

***

Միտքը՝ չասված...
Ուղին՝ չանցած...
Սերը՝ չզգացած
Պետք չէ հեռանալ:

***

Երբ սպասումդ չի գերակայում
Իրականությանը...
Դու տոնում ես քո պարտությունը...
Չես հավատում պարտությանդ՝
ՀԱՂԹՈՒՄ ԵՍ:

30.01.2016

***

Ձանձրույթը
Նորը բացահայտելու
Բացակայությունն է:

***

Սերն ինչ է ուզում ինձնից՝ չգիտեմ,
Բայց ես նրանից
Երջանկություն եմ ուզում՝
Քայլել քաղաքի աղմուկում
Եվ լսել միակիս ձայնը:

05.03.2017

ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

Սերմի փոխարեն դի ցանված
Հողի մեջ,
Անպտուղ ու անբողբոջ
Քարերի տակ,
Ամեն ինչ հավասար է.
Երկրինը՝ երկրին,
Երկնքինը՝ երկնքին:

***

Սիրում եմ ծառեր,
Նրանցից են ծնվում գրքերը:

***

Չեմ գտնում քեզ,
Որովհետև շարունակում եմ
Փնտրել:

***

Թաքնվում ես,
Ավելի բացահայտ ես մտածում:

***

Այն ժամ, երբ
Խուսափում էի քեզ սիրելուց,
Մահվան մասին պատկերացում
Չունեի:

***

Երբ մեծ է թվում
Չարիքը մարդու,
Հեռացիր նրանից,
Տե՛ս,
Այնքան փոքր ու աննշան է
Հենց ինքը մարդը,
Ի՞նչ խոսք նրա չարության մասին:

***

Մի օր,
Երբ համարձակություն ունենամ,
Կգամ...
Երանի ուշ չլինի:

***

Ջրվեժից նետվող նավակում
Ամուր գրկիր կողքինիդ,
Անգամ երբ նա թշնամիդ է:

***

Երբ հասկացա
Թե ինչեր է անում հոգին
Անպոր մարմնի մեջ,
Աստծո կորությունն
Ավելի գիտակցեցի:

***

Ասված բառերից հետո
Մոխիր է մնում միայն
Մեր ներսում:
Չասված բառերը
Հրդեհ են թեժացող,
Որից էլ ծնվում է
Ամեն բառ ու տող:

***

Երբ հասնել ես ուկում,
Մի կանգնիր,
Եթե սկսես մտածել,
Երբեք չես գոռա:

***

Ամեն մի քայլ
Մեկ տանում է ինչ-որ տեղ,
Ամեն մի տեղ
Մեկ ստիպում է քայլել՝
Վերադառնալու ինչ-որ մի տեղ:

***

Անիմաստ է ապրել
Միայն իրականությամբ:
Քարքարոտ ակոսներով ժայռի պես՝
Անջուր, անառու:

07.01.2016

***

Բացատրություններն անհրաժեշտ են
Հեռանալիս,
Վերադառնալիս
Ավելորդ է անգամ
Բառը:

04.11.2015

***

Ստով են անվում ամենքն
Այս կյանքում,
Նա, ո՛վ չի ստում,
Սոված են կարծում....
Նախանձ են խմում ամենքն
Այս կյանքում
Նա, ո՛վ չի խմում,
Ծարավ են կարծում....

***

Ինձ հղիացնում ես
Տողերով,
Ուր միայն
Դու ես ծնվում:

***

Կվերջանար հեքիաթը,
Եթե գտնեին այդ երեք խնձորներից
Գեթ մեկը:
Ես կծեցի խնձորը,
Եվ նոր հասկացա,
Որ մեր հեքիաթի վերջում
Ընկած խնձորներից էր դա:

***

Աչքերդ վուսպ
Ու քչախոս,
Աչքերդ
Ագահաբար սնվում են արևի
Շողերով
Եվ գիշերը լցնում են սենյակս
Զուսպ ու քչախոս լուսավորությամբ:

***

Երանի օրն այդ չվերջանար,
Չհալվեին մոմերը,
Լույսը չմոտենար,
Մինչ արթնանալդ
Քնեիր համբույրներիս մեջ:

***

Մեր լավագույն բարեկամը
Մենք ենք,
Բայց մեկ հետ բարեկամություն
Չենք անում:

***

Մարդը հավատում է,
Ոչ նրա համար,
Որ ճշմարիտ է դա,
Այլ որ նա ուզում է
Հավատալ:

***

Ժպիտ եմ, որ
Շուրթեր չլինելու պատճառով
Այդպես էլ չի երևում:
Արցունք եմ, որ
Անաչք է՝ չի ծնվում:
Բողբոջ եմ՝անծառ,
Որ չի պտղանում,
Հոգի՝ անմարմին,
Բառ՝ անաղոթք,
Լեզու՝ աներակ
Աչքեր ունեցա, բացեցի,
Տեսնում եմ
Այստեղ չես,
Կորցրի աչքերս:

***

Գույների մեջ մի գորշ կետիկ
Պտտվում է դառնում լույսիկ,
Մասնատվում է,
Սահում,
Թարթիչներից դեպի շուրթեր,
Ու լեզվի տակ նուրբ շփումից
Պտտվում է,
Պտտվելով, պտտվելով պարուրվում է,
Բարձրանում...
Գույների մեջ այդ կետիկը
Իմ գույներն է գորշացնում:
Հետո պարող մի տերև
Ձյան սպիտակին կանաչ հասցե է
Թողնում:
Իմ մատները պարուրում են
Փաթիլներ,
Թղթի փոքրիկ կտորներ,
Ու նետվում են ափիս միջից,
Ու նետվում են ծովի ափից
Խենթ ու բարի ալիքները,
Իմ խելագար ընկերները:
Պտտում ենք բոլորս էլ
Ժեստեր, մտքեր կամ հայացքներ,
Լռում ենք ...
Ճամփան դարձնում գորշ մի կետիկ:

Իրար գրկում արտասվում ենք,
Բայց ոչ երբեք իրար համար:
Իրար գրկում ծիծաղում ենք,
Բայց ոչ երբեք իրար համար:
Մի գորշ կետիկ, մի մաքուր լույս:

***

Դու ինձ չհիշես,
Ես ինձ չհիշեմ
Եվ մոռացվի երկինքը:

***

Մենությունս
Լցնեմ քեզնով
Եվ
Փրկվեմ հրդեհից:

***

Երբ հանդիպեցի,
Դու իջնում էիր,
Դու ինձ պատմեցիր
Ինչեր կան այնտեղ՝
Բարձրում…
Նայեցինք, ժպտացինք….
Ինձ թվաց՝ ուշացել եմ,
Ես կարոտում եմ
Մեր հանդիպումը:

***

Երգը դողում է
Արյանս մեջ,
Ես կծկվում եմ
Թևիդ տակ,
Բալմոցի մի անկյունում...
Մատներդ նվագում են մարմինս
Եվ
Երգը դողում է
Արյանս մեջ:
Խոսքը
Խուտուտ է տալիս,
Աչքերիդ մեջ
Սպիտակ ամպեր են ժպտում,
Քո շուրթերով պողեր ես
Հավաքում իմ շուրթերից,
Եվ
Խոսքը
Խուտուտ է տալիս:

***

Անկյունում մլավում են աչքերդ,
Մաշկդ ճաքճքում ու չքանում է
Փրփուրների պես:
Խառնիր օրս,
Որ մենակ չմնամ
Մլավող աչքերիդ հետ...
Անկյունում
Կորցում եմ դերս, որ
Ի ծնե դաջված էր երակներիս,
Կորցնում եմ հոտը, որ
Մատաղիսյան տնամերձում
Անջուր պտղավորված
Սերկևիլից էր մնացել
Մատներիս, շուրթերիս,
Հոգուս մեջ…
Կորցնում եմ հիշողությունս, ուր
Դռան թակոցը
Քչփչող կնոջ տխուր լուր է,
Գյուղից նոր տեղափոխված
Ուսանողի
Հուզումնալից ձայնն է՝
Համոզված լինելով,
Որ այստեղ՝ դռան հետևում
Անվճար է հանգրվանելու...

Անկյունում թաքնված
Դողացող մարմին և
Սխալված անծանոթի
Շփոթված դեմք է...
Անկյունում դատարկություն է,
Որ հասցրել է ուտել տունը:
Ես մնացի տանը մենակ, ու
Տունն ինձ մարսեց,
Միայն գրառումներս մնացին:

***

Խոսում եմ սիրուց,
Օտարանում են մատներդ
Մտքերում իմ գրկում եմ, շոյում,
Համբուրում
Թեքվում եմ շնչառությանդ կողմը,
Եվ
Ստեղները փախչում են մատներիցս,
Օտարանում է մեղեդին:

***

Երբ գլուխդ
Խանգարում է
Խոսել մարմնիդ,
Լույսը մթնեցնում է աչքերդ՝
Փակելով դռները
Երակների,
Պահը,
Մտորումը,
Ցավը
Չեն հիշվում
Գլորումների, ծակոցների, հոտի
Խայտանքի մեջ,
Ամենուր թռչող կետիկներ են
Օդում լողացող դեմքեր,
Հայացքներ, որոնց ուզում ես
Ապտակել,
Բայց ձեռքիդ ծանրությունը
Թեթև-թեթև իջնում է մեջքին,
Դու փակում ես աչքերդ և
Մատնաձայրերով գծագրում ես
Շուրթերս…
Ոչինչ չի փոխվել
Եվ ոչինչ նույնը չէ…
Ինչ որ մեկը թաքուն հետևում է
Պատուհանիդ թպրտացող լույսին
Դու և նա ուտում եք...
Մենք ուտում ենք լույսը:

24.05.2016

***

Ես չլինեմ
Դու կկարդաս տողերս,
Տաք շունչս
Փեթակից ծորացող մեղրի պես
Կքաղցրացնի շուրթերդ:

24.07.2016
Լեռնամերձ Ստեփանակերտ

***

Կարողանայի գրել քո մասին՝
Ես կլռեի:
Աստղադիտակին չհավատացող
Մեկը,
Աստղեր է տեսնում աչքերիս մեջ:
Արթնացնում է հոգիս:
Կարողանայի գրել քո մասին՝
Ես կգրեի լռության և
Լռության մեջ լուռ չմնալուս մասին:
Ամեն գիշեր արթուն եմ մնում՝
Պատմելու լուսնին,
Որպեսզի ցերեկները դու
Արևից լսես:

17.04.2016

***

Չեկ թվում է, թե ես գիտեմ
Ինչ-որ բան իմ մասին,
Ուրեմն դուք միամիտ եք
Կամ գիտեք ավելին,
Քան ես:
Ծովի կապույտ լինելը բոլորը
Գիտեն,
Եվ այն, որ փոքրիկ հրեշտակը
Կարող է բալմագլխանի դևին
Սպանել,
Հրա՞շք է:
Հրաշքը երևակայությունն է
Հորինողի կողմից
Սուբյեկտիվ ընթացքով,
Երբ հավատում ես,
Այլևս հրաշք չէ:

***

Ուզում եմ սպանել քեզ իմ…
Որովհետև դու ծնվեցիր ինձնից
Հեռու
Օտար վայրում:
Սպանել
Եվ չզգալ, որ մեռնում ես,
Որովհետև չեմ տեսնում՝
Ինչպես ես ապրում:
Ուզում եմ սպանել
Տարիներդ, հիշողությունդ,
Տարածությունը,
Դարձնել քեզ այնպիսին,
Ինչպիսին որ ծնվել ես,
Գրկել քո բարուրը,
Որ սոված չմնաս …
Ուզում եմ սպանել քեզ
Համբույրներով:

30.01.2016

***

Ես իմ չասված բառերից փունջ եմ
Կապմելու,
Չեմ նվիրելու երբեք ոչ մեկին...
Դու միակն էիր, ում առանց
Ճանաչելու սիրեցի,
Առանց հասկանալու
Ցավեցրի,
Առանց երկմտելու
Վստահեցի,
Ես իմ չասված բառերը
Փունջ եմ դարձնելու,
Անհասցե ուղարկելու եմ ոչ մեկին...
Դու իմ չասված բառերի լսողն ես
Միշտ,
Ծնող իմ թանկագին:

01.12.2016

***

Սարի կրծքից, դանդաղ
Ելնում է արևը
Եվ օդը լցվում է քեզնով:
Հայացքդ ջերմացնում է քայլերս…
Մի փակիր աչքերդ,
Որ հոգիդ չմնա առանց
Արտացոլանքի…
Աչքերդ ուրիշ են հաճույքի պահին:
Ես լքեցի ինձ,
Եվ հուշը խեղդում է կոկորդս:
Երբ դու էլ հեռանաս,
Այնքան դժվար կլինի լսել այս երգը:
Բառս թողել եմ սեղանիս,
Սակայն չի հասնում այնտեղ՝
Քեզ մոտ
/Գուցե այնտեղն իրականում չկա՞/:
Խայտում է սերն
Ափերիս մեջ…
Արևը կարոտում է երգերդ, ՍԱ՛Ր:
Արևը դանդաղ իջնում է
Սարի կրծքին՝
Ականջը դնելով նրա շուրթերին:
Օրը շարունակում է ծնվել
Խավարի մեջ:

15.02.2017

***

Լույսը
Բացվում է
Քո աչքերից,
Օրվա բոլոր ստվերներում
Դու ես,
Դու,
Ում մոտ լույսը
Բացվում է իմ աչքերից:

***

Մենք ժամանակի մեջ չենք,
Այդ ժամանակն է մեր ներսում,
Ծերանում ենք,
Որովհետև
Չենք կարողանում ապրել:
Մի վերերկրյա ժամանակ կա,
Որին ոչ ոք ժամանակին
Չի հասկանում՝
Հասկանում ենք միայն
Երկիրը լքելիս:

06.08.2016
ք. Ստավրոպոլ

***

Հեռանալուց առաջ
Մի անջատիր լույսերը,
Ես դեռ վերադառնալու եմ,
Ճամփեպրի քարերը
Սահմանաքարեր են,
Որոնցից այն կողմ
Թշնամու դիպուկահարն է,
Անտառը անձրևաջուր է խմում,
Եվ երբեք չի հոգնում
Կացնի հարվածներից,
Թաքուն հանդիպումներից:
Հողը անբարո կնոջ պես
Լափում է յուրաքանչյուրի սերմը,
Սակայն հողն առաքինի կնոջ պես
Ամենաարժանիի սերմն է
Սաղմնավորում:
Հեռանալուց առաջ
Մի կողպիր դուռը,
Ես դեռ վերադառնալու եմ...

02.11.2016

***

Մութն ընկերացնում է
Ճամփորդներին,
Խավարի մեջ վստահելի մեկն
Ունենալ,
Նույնն է թե
Ամեն առավոտ վարդերի
Բացվելուն նայես,
Կյանքը սիրով է լեցուն,
Սակայն անսեր է մնում
Ամեն մի անհավատ անկյուն:
Փոխիր ուղղությունը քայլերիդ,
Մի՛ վախեցիր կտրել-անցնել
Անտառը,
Ուր ոչ ոք քեզ չի որոնելու,
Երբ միայնակ ես հաղթահարում,
Քո մեջ գտնում ես նրանց,
Ում վաղուց կորցրել էիր,
Քո մեջ հաստատում ես նրանց,
Ում վաղուց մոռացել էիր:
Անցած է ճանապարհը,
Անցած է նաև ծարավի զգացումը:
Երբ հեռանա արեգակը,
Քաղաքում ուրիշ լույսեր կլինեն:

24.12.2016

***

Անհագ ցանկությամբ
Նայում ես ինձ,
Ինչպես երկնքին կնայեիր
Թռիչքից առաջ,
Մենք ամեն օր մոլորակներ հասնող
Ուղի ենք կառուցում՝
Խոստովանելու համար կգայումը,
Որ
Արթնանում է ամպերի մեջ՝
Անձրևելուց առաջ,
Սերմի մեջ՝ ծլելուց առաջ,
Խոտի մեջ՝ հողը ճեղքելիս,
Մրջյունի՝ բույնը լքելիս,
Արագիլի՝ տուն վերադառնալիս
Մարդու՝ լույս աշխարհ գալիս:
Ես իմ Աշխարհը տեղավորում եմ
Քո մեջ,
Եվ երբ գնում ես
Ապրելուս միակ վայրը սպասումն է
Դառնում:

***

Դու մի հեռացիր,
Թեպետ ես վատն եմ,
Շոյիր ներկայությունս
Եվ արև նկարիր,
Որ ծնվեմ քեզնից, սա՛ր,
Որպես մանուշակ,
Քարերը ճեղքեմ ու
Բացվեմ կրծքիդ,
Դու մի հեռացիր, սա՛ր,
Քեզնով թող հոսեմ
Ու քչքչամ քեզնով,
Իմ ներկայությամբ
Արև նկարիր,
Շողերի վրա ես կնվագեմ:

***

Գիշերը
Կարոտս արթնանում,
Ջարդում է հուշերս,
Ներկա պահանջում..
Միայն ձայնն է քո, որ սանձում է
Նրան:
Գիշերը
Արթնանում ենք
Միասին,
Լուռ հետևում ենք
Մեր քնած կարոտին:

01.04.2017

***

Գիշերները կգում եմ
Բացակայությունդ,
Հիշո՞ւմ ես, քնելուց առաջ
Կռվում էինք՝
Ով է մեկնից առավել սիրում
Մյուսին,
Հիմա գուցե կուզեկ նետեմ:
Երակներն իրականությունն
Արտացոլող հայելապատառիկների
Հավաքածու են,
Երբ մտքերով ինձ հետ ես,
Սիրտս սպիտակ հեքիաթներ է
Հորինում,
Գիշեր է... դու վերադառնում ես իմ
Մարմին,
Զգում եմ բացակայությունդ,
Ուզում եմ գրկել քեզ, որ
Հավատաս գոյությանս:

***

Մարդիկ հոգնեցին քայլելուց,
Սկսեցին թռչել, բայց
Թռչուն չդարձան:
Մարդիկ հոգնեցին նկարելուց՝
Խլրվեցին:
Հոգնեցին խնդրելուց՝
Պահանջեցին:
Գալանները հոգնեցին խժռելուց,
Բայց
Զգացումը (քաղցի) թույլ չտվեց
Փոխվել:
Մարդիկ հոգնեցին ապրելուց,
Մահացան:
Հոգնեցին մեռնելուց...
Հոգնեցին ամենքից, ամենից,
Բայց զգացումը թույլ չտվեց փոխվել
Մարդուն:
Մարդիկ հոգնեցին քայլելուց՝
Թռչեցին:
Իսկ թռչունները չեն էլ երազում
Քայլելու մասին:

***

Անապատում հայտնվածի
Հովանոցը,
Եվ մութը
Անտանելի շոգ օրվա…
Կարոտից ճանկռոտված սրտի
Կաթիլը՝
Աչքերի խորքում,
Եվ կապված խանդը՝
Ժպիտից, համբույրից այնկողմ:
Ես դեռ չեմ սովորել ապրել,
Անցյալը տառապում է
Կոտրվածքներով,
Եվ ապագան շարունակում
Անհայտ մնալ:

***

Այս տերևը բառն է
Իմ ու քո միջև,
Կարոտել եմ համը սիրված լինելու,
Պարանոցիս ներծծվում է հոտն
Օծանելիքի,
Մենյակիս օդը չի լցվում շշուկով,
Մենյակս երազ է տեսնում:
Աստծո ստեղծած բոլոր
Ճանապարհներով
Անցնում է մարդը,
Բայց դեռ չի հանդիպում Աստծո
Ստեղծած մարդուն:

***

Երևի ոչ ոք չիմանա,
Որ անձրև չեմ սիրում..
Գիտեմ, մենակ պիտ թռչեմ
Իմ երապաթել հագուստներով,
Իմ հորինած կերպարները
Պիտ լքեն ինձ,
Կերպարներ անտեսանելի ու
Անընթեռնելի՝
Չերչիլի էպիստոլյան ձեռագրեր
Հիշեցնող,
Բոլորը կլքեն ինձ
Վայրէջքի պահին,
Սլաքները կանգ կառնեն
Վեցն անց կես,
Նույն այն ժամին, երբ
Վերջին շունչն է փչել Քենեդին…
Գիտեմ, պարտության հանդեպ
Վախն է
Ուժեղ դարձնում,
Իսկ իմ թուլությունն
Իմ ուժեղ լինելն է:
Այսպես մենակ է մնում նա,
Ով իր մեջ սպանում է մենությունը:

***

Կուզենայի գրել քո մասին,
Չյո՛ւն, այնպես, որ
Քո փաթիլերը չհալվեն:
Կուզենայի գրել քո մասին,
Լռությո՛ւն,
Առանց բառերի,
Քանզի ամեն աղմուկում
Դու ես միշտ հաղթում:
Գրել քո մասին, հաղթանա՛կ,
Երբ գալիս ես պարտությունից
Խուսափելիս:
Կուզենայի գրել քո մասին, սո՛ւտ,
Թե ինչպես ես խառնվում
Սխալներին
Ու դառնում ճշմարտություն:
Կուզենայի գրել քո մասին բառ,
Թե ինչպես ես խոսում
Երբ գրում եմ քեզ
Եվ ինքս լռում:

***

Ես պիտի չգրեմ քո մասին,
Որքան էլ որ ցանկանամ գրել,
Ինչպես կարողացար այնքան մոտ
Լինել, որ
Վախենամ եմ քեզ կորցնելուց
Այնպես,
Կարծես երբևէ գտել էի:
Ես պիտի չգրեմ քո մասին,
Ու դու չհասկանաս,
Որ չեմ քնում գիշերները,
Որովհետև կողքիս չես:
Որքան էլ որ ցանկանամ գրել,
Ես պիտի չգրեմ քո մասին:

05.12.2015

***

Տան սառնությունը
Անթարթ նայում է տաքացուցիչի
Կարմրաթեժ աչքերին
Եվ համարձակորեն
Գրկում է մարմինս՝
Փորձելով հանդարտեցնել
Գրչի պարը՝
Մատներիս արանքում,
Սառնությունը արցունքներ գլորեց
Ապակին ի վար,
Ու մեղմ ժպտաց
Մարմնիցս ներս.
- Այն, ինչ չի երևում,
Ուժեղ է քեզնից:

17.01.2016

***

Զգալ՝
Ինչպես են
Սրտիդ կարկերն ավելանում,
Երբ ժպիտս դրոշմում եմ կրծքիդ…
Զգալ՝
Ինչպես է
Արթնանում մարմինդ,
Երբ փակում եմ աչքերս…
Զգալ, որ
Գոյություն ունես,
Ու ես չեմ գժվել:

***

Հնարավոր է
Հաղթահարել ամեն ինչ.
Երբեմնի անտառն
Այսօր հրապարակ է,
Մարդաշատ բակը՝
Գերեզմանոց,
Բարի սիրահարը
Անսիրտ անցորդ է:
Գուցե ոչինչ էլ
Հնարավոր չէ:

***

Քո բացակայությունը
Ճահիճ է,
Եվ չի հաջողվել կտրել ու անցնել…
Գիշերը ափերիդ մեջ
Հրդեհ է և աղոթք,
Որ չվառի լույսն
Արեգակից առաջ:

***

Ամենաշատ վոհերն
Ունեցողը օրն է,
Անհիշելի ժամանակներից սկսած
Երկիրն իր պտույտներով
Քանի-քանի
Ժամեր ու վայրկյաններ է սպանում՝
Անվերադարձ
Եվ ոչ մի ժամանակ
Օրը չի դառնում սգավոր,
Նա շարունակում է ստեղծել նորը:

***

Անձրևն աղմուկով լցրեց սենյակս,
Ամպերի ցավը սուր լուսավորեց
Դեմքս,
Արցունքներս աղաչանք են
Դառնում ետդարձիդ...
Մի մատնիր ինձ լռության անձրև,
Թափվիր ու գողտրիկ սողոսկիր
Սենյակս
Պատուհանիս անցքերով,
Տուն մտնող լարերով սողոսկիր,
Ինչպես գարնանային քամին է
Մրսեցնում
Արևից ջերմացած մարմինը:
Ոչինչ իր ժամանակը չունի
Ոչ ծնունդը, ոչ էլ մահը,
Ոչ սերը, ոչ էլ մոռացումը,
Դու մի մոռացիր իմ լուսամուտը
Իմ ապակիներն էլ ծեծիր,
Ես անսպասման կբացեմ քո առաջ՝
Կարծես դպրոցից վերադարձող
Տղայիս եմ դիմավորում:

***

Մեղք եմ՝
Ծպտված հանցագործ սրտում,
Որ ամեն կերպ խուսափում է
Պոռթկումից,
Բառ եմ՝
Ծպտված կոկորդի մի անկյունում,
Որ հանկարծ չսահի դուրս:
Ես ոչ ոք եմ, դատարկ տարա,
Որ նույնիսկ իր ձևը չգիտի՝
Եռանկյուն, քառանկյուն, գուցե
Ջարդված...

***

Ժամանակը ջնջում է հետքերն
Իրականությունից՝
Տանելով դրանց երևակայությունն..
Մեքենայի անիվները,
Ասֆալտը տաք-տաք,
Ամեն նոր երևույթ
Հերքում կամ ծածկում է հինը,
Լավագույն դեպքում՝ հիշեցնում:
Դասավորվածությունը
Երևույթների,
Նյութերի,
Սպանությունների,
Դրանք տարբեր են
Ամեն անկյունից,
Երբ հայտնի է լուծումը,
Պարզ է թվում հարցը:
Սակայն
Քամին, որ հանդարտ խաղում է
Կրակի կայծերի հետ,
Մեղավոր չէր
Ալեկոծությունից խեղդված
Օրագրի համար:
Օրագիր, ուր
Ճշմարտությունն էր
Մեռնող քիլլերի…

***

Հրապուրիչ է,
Երբ ուղեղդ
Փնտրում է նոր դեպքեր
Նախորդ «հերոսի» հետ,
Երբ թվում է՝
Ոչ ոք ավելի լավ չի խաղալու,
Քան նա:
Հեռվում չխչխկում են ռելսերը,
Նոր քամի է մոտենալու:

25.06.2017

***

Քեզ հետ
Ավելի հաճախ եմ նայում
Ժամացույցին,
Տեղավորել փորձելով հագեցումս՝
Հեռացող վայրկյանների
Եվ մոտեցող ժամի արանքում:
Ու երբեք չեմ հագենում
Ընթացքից:

25.06.2017



***

Պոկում եմ էջերս
Քո մասին պատմող,
Փշրում եմ բաժակը,
Որ
Երբեք չես ըմպելու,
Ես վառում եմ հուշս...
Սակայն կրկին ես ծնվում:

***

Մարդն ուղիղ գծով է ծերանում,
Մենք տեսնում ենք այն,
Ինչ երևում է…

***

Անտեսանելի գանգրահերներ կան
Երկրի վրա,
Մեր մտքերն են դրանք:

***

Եթե վայրէջքի
Ապահով լինելու
Ենթադրությունը /հույսը/
Չլիներ,
Մարդը երբեք թռիչքի հաճույքը
Չէր փորձի:

***

Ես այդպես էլ չգտա քեզ,
Ինչ ցավոտ է խոստովանելը,
Չգտա խոսքերն այն
Որ անձրևի պես պիտի
Թափվեին,
Ու թաց մազերս քամու հետ
Խաղային:
Չգտա գիրկը,
Որ բաց դռան պես պիտի ընդուներ
Ինձ,
Եվ ես ամբոխի մեջ կանհետանայի
Չգտա քայլը,
Որ արահետ կդառնար ինձ համար
Եվ ինձ ծաղիկներ կտար:
Ես չգտա՝
Ինչ ցավոտ է խոստովանելը:
Չգտա կարոտը,
Որ հոտս որսար
Հապար բույրերի մեջ:
Չգտա մարմինը,
Որ ոչ մեկի աչքում
Մենակ չերևամ,
Մենակ չքայլեմ,
Չխնդամ մենակ,
Մենակ թող ցավամ,
Մենակ արտասվեմ,
Բայց ոչ մի անգամ մենակ չխաղամ:

***

Եվ դուք գեղեցկություն եք համարում
Աչքե՞րը, որոնց արցունքը
Փայլում է թեժ այտերին,
Մազե՞րը որ առատորեն ծածկում են
Խառը մտքերը...
Գեղեցկություն եք համարում
Մորենին, որ ձորի շուրթին է
Բացվել,
Խատուտիկը, որ ժայռի մեկ
Հատիկն է....
Ապա ի՞նչ է ժպիտը՝ գրկի մեջ,
Դեմքը ծածկված տաք ափերով,
Երակը՝ իրական ոտքերով...
Ի՞նչ է հասկացված լռությունը,
Հանգիստ պարը շուրթերի
Եվ նվիրումը.
Սա՛ է գեղեցիկը:

***

Իմ լռությունը
Հաշտություն չէ
Քո բացակայության…
Իմ ճիչը
Բողոք չէ
Քո լռության:
Պարկապես
Ես այսպես եմ խելագարվում՝
Առանց քեզ:

27.09.2017

***

Լռությունդ
Հասկանան-չհասկանան…
Արցուքներդ
Տեսնեն-չտեսնեն…
Բայց նրան
Պարտավորվիր բացատրել
(Միշտ չէ տարածությունը լսելի),
Որ հաշտություն լինի
Սրտի և հոգու,
Մարմնի ու մտքի,
Նա, ով ամենաթանկն է,
Լսելով էլ կամոքվի:

23.09.2017

***

Թեպետ ես վատն եմ,
Դու մի հեռացիր,
Շոյիր դեմքս,
Արև նկարիր,
Թող ծնվեմ քեզնից, սա՛ր,
Որպես մանուշակ
Քարերը ճեղքեմ ու
Բացվեմ կրծքիդ,
Դու մի հեռացիր
Ծաղահոտ սարից:

***

Մերժում եմ
Բոլոր հպանցիկ պահերը,
Նուրբ խստությամբ
Մատներիս տակ ճմլում եմ
Լույսի կեղտոտ թիթեռնիկին,
Դու կլորանում ես,
Թեթևասահ
Արագություն ես հավաքում
Երակներիս մեջ,
Զարկերս արյանս մեջ ծփում են:
Ես երեխա եմ
Ու հավատում եմ
Ժողովրդի ստեղծած
Իշխանությանը,
Մուրճի տակ հաստատված
Արդարությանը,
Ստորագրիր թղթի ճշմարտությունը
Եվ դու կպրկվես ինքդ քեզնից
Որպես ամենամեղմ պատիժ….
Այլևս հավատալը երեխայություն է,
Թուղթ չունենալը՝ խելքի
Առկայություն,
Զզվելու չափ ծիծաղելի է,
Երբ մարդը
Վախենում է անտեր լինելուց:

ՔՈ ՆՎԻՐԱԾ ԱՍՏՂԸ

Երկար,
Շատ երկար
Նայում է ինձ աստղը,
Մենք այնքան քիչ ենք վրուցում,
Մեր լռությունը փաթաթել եմ
Պարանոցիս,
Զմրուխտե շղարշ է,
Թափահարվում է գանգրավարս
Կարոտներից
Քամու շոյանքներից
Սեթևեթող ուռենու ճյուղի պես:
Մեր լռությունը փաթաթել եմ
Մերկ մարմնիս՝
Ալիքների խաղից պսպղացող
Սալքար:
Երկար
Շատ երկար
Նայում է ինձ աստղը,
Որ նվիրել էիր,
Նա երբեք
Ինձ մենակ չի թողնում:

***

Գնիր քեզ համար
Անտառներ
Եվ մոլորվիր այնտեղ,
Որ հեռու քայլես
Իմ չարության ջրվեժներից,
Որ բարության փաթաթուկներս
Չգրկեն մարմինդ:
Ինձ համար
Ոչինչ չեմ ուզում,
Գնիր քո անանցանելի անտառը
Եվ մոլորվիր այնտեղ
Ինձնից գողացած պահերով:

21.08.2017

***

Նետիր երականքդ
Դեպի երկինք,
Թող որ ընկնի
Ու մի լավ ջարդվի,
Միևնույն է, ում էլ տաս՝ ջարդելու է:
Ես չսիրեցի բուրումնավետ
Գույները ծաղիկների
Չնվիրված,
Որոնք շարունակում են չնվիրվել
Ինձ
Լուսախառը գիշերներում, ուր
Երականքներս նետում եմ
Դեպի երկինք:

22.08.2017

***

Երբեք ոչ ոքի
Չեմ սիրել այնպես,
Ինչպես կարող եմ:
Իմ սիրո մեջ էլ ապրում են
Երապ, նվիրում,
Թոիչք ու պարգև,
Բայց
Ինչպես ես եմ կարող,
Չեմ սիրել երբեք:
Ինձ չի ճանաչում
Ճամփան, որ անցել եմ
Մարդն, ում բարևել եմ,
Չի ճանաչում ծառը,
Որին գրկել եմ,
Ծաղիկը, որին կծմծել եմ,
Որովհետև այնպես չեմ սիրել,
Ինչպես կարող եմ:
Էլ ոչ մի խոստում
Փայլ չէ ինձ համար,
Ոչ մի հեռացում
Ցավ չէ ինձ համար,
Անցած տարիներն էլ իմը չեն
Կարծես,
Քանզի չեմ սիրել այնպես,
Ինչպես կարող եմ:

ՅՈՎՍԷՓ ԵՒ ԳԱՐՈՒԼԻՆ

ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

(Հիմն. Սեպտ. 4, 2005)

Մատենաշարով լոյս տեսած է

1. Յովսէփ Նալպանտեան, «Լոյս», ընդհանուր գիտելիքներ, թիւ 3: Երեւան, 2006, 320 էջ, տպաքանակ՝ 1100:

2. Յովսէփ Նալպանտեան, «Լոյս», հանրագիտակ, թիւ 5: Երեւան, 2009, 366 էջ, տպաքանակ՝ 3000:

3. Յովսէփ Նալպանտեան, «Լոյս», հանրագիտակ, թիւ 6: Երեւան, 2009, 366 էջ, տպաքանակ՝ 3000:

4. Վազգէն Առաքելեան, «Շիրազ-Նամէ», չափածոյ վէպ: Երեւան, 2009, 196 էջ, տպաքանակ՝ 500:

5. Անի Յարութիւնեան, «Ութերորդ Երկինք», բանաստեղծութիւններ: Երեւան, 2009, 60 էջ, տպաքանակ՝ 500:

6. Ռոմանոս Սահակեան, «Ars Poetica», բանաստեղծութիւններ: Երեւան, 2009, 208 էջ, տպաքանակ՝ 600:

7. Վազգէն Շուշանեան, «Ընտրանի», գլխաւոր խմբագիր Սուրէն Դանիէլեան, խմբագիր Քնարիկ Աբրահամեան, պատմուածքներ: Երեւան, 2010, 394 էջ, տպաքանակ՝ 650:

8. Յովսէփ Նալպանտեան, «Ամերիկահայ Գիրքի Պատմութիւն. 1858- 2011», մատենագիտութիւն: Լոս Անճելըս, 2011, 178 էջ, տպաքանակ՝ 300:

9. Յովսէփ Նալպանտեան, «Հայկական Բառարաններու Համառօտ Պատմութիւն», մատենագիտութիւն: Լոս Անճելըս, 2011, 71 էջ, տպաքանակ՝ 300:

10. Ռուբէն Սաքապետոյեան, «Արեւմտահայերէն-Արեւելահայերէն Նոր Բառարան»: Երեւան, 2011, 380 էջ, տպաքանակ՝ 1000:

11. Յովհաննէս Շիրազ, «Հայոց Դանթէականը»,

պոէմ, կազմեց եւ խմբագրեց՝ Յովսէփ Նալպանտեան: Լոս Անճելըս, 2011, 162 էջ, տպաքանակ՝ 500:

12. Սամուէլ Մուրատեան, «Յովհաննէս Շիրազ. Բանաստեղծը, Մարդը»: Երեւան 2012, 560 էջ, տպաքանակ՝ 1000:

13. «Հայոց Լեզու», բանաստեղծութիւն եւ արձակ, կազմեց եւ խմբագրեց՝ Յովսէփ Նալպանտեան: Լոս Անճելըս, 2012, 377 էջ, տպաքանակ՝ 450:

14. Յովսէփ Նալպանտեան «Ուղղագրութեան Նիւթերու Ժողովածու. Բառարան»: Լոս Անճելըս, 2012, 154 էջ, տպաքանակ՝ 350:

15. «Մեսրոպ Մաշտոց. Մեծասքանչը», բանաստեղծութիւն եւ արձակ, կազմեց, խմբագրեց եւ հրատարակեց՝ Յովսէփ Նալպանտեան: Լոս Անճելըս, 2013, 687 էջ, տպաքանակ՝ 350:

16. «Կամուրջ. 2013» տարեգիրք: Կազմեց եւ խմբագրեց՝ Անահիտ Բոստանջեան: Թբիլիսի, 2014, 480 էջ, տպաքանակ՝ 400:

17. Յովսէփ Նալպանտեան «Կեանքի Շարունակուող Շաւիղներ» հրապարակագրութիւն: Լոս Անճելըս, 2015, 252 էջ, տպաքանակ՝ 350:

18. Աշոտ Ջահակիր, «Հայապատում» պոէմ, խմբագիր Նայիրի Յովհաննա: Լ.Ա., 2015, 130 էջ, տպաքանակ՝ 400:

19. Յովսէփ Նալպանտեան «Հայ Գիրքը Ամերիկայի Մէջ» մատենագիտութիւն: Լոս Անճելըս, 2015, 385 էջ, տպաքանակ՝ 300:

20. «Սիրոյ Մատեան» բանաստեղծութիւն եւ արձակ, կազմեց, խմբագրեց եւ հրատարակեց՝ Յովսէփ Նալպանտեան: Լոս Անճելըս, 2016, 650 էջ, տպաքանակ՝ 350:

21. «101 աղօթք յիշատակի», Հայոց Ցեղասպանութեան նուիրուած բանաստեղծութիւններու ընտրանի, կազմեցին՝ Արմէն Աւանեսեան եւ Սիւզաննա Կարապետեան: Երեւան, 2016: 144 էջ, տպաքանակ՝ 500:

22. Յովսէփ Նալպանտեան «Հայ գիրքը Ամերիկայի մէջ. յաւելուած»: Լ.Ա., Լոս Անճելըս, Յունիս 2016: 75 էջ, տպաքանակ՝ 200:

ՍՈՆԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Ծնվել եմ 1990թ. դեկտեմբերի 1-ին, Արցախում՝ Մատաղիսում:

2007թ. ավարտել եմ Ստեփանակերտի Աշոտ Ղուլյանի (Բեկորի) անվան թիվ 2 միջն. դպրոցը՝ գերազանց առաջադիմությամբ:

Ստեղծագործում եմ տասնմեկ տարեկանից:

Տպագրվել եմ տարբեր պարբերականներում և ալմանախներում ինչպես Արցախում, Հայաստանում, այնպես էլ արտերկրում («Առաջին Հանդիպում», «Գանձասար» «Արցախի երգ», «Քայլեր և Արձագանք» (Երևան), «Բանաստեղծությունն աշխարհի միջօրեականներում», «Սիրո մատյան» (Լոս Անջելոս), «101 աղոթք հիշատակի» և այլն):

Առաջին գիրքս՝ «Ի դեմս արևի» բանաստեղծությունների ժողովածուն լույս է տեսել 2009թ., իսկ 2013 թ. երկրորդը գիրքս՝ «Երկու բառ ունեմ քեզ ասելու»՝ հայերեն և ռուսերեն բաժիններով:

2011թ. ավարտել եմ Ստեփանակերտի Գրիգոր Նարեկացի համալսարանի իրավագիտության, 2013թ. մագիստրատուրայի նույն բաժինը:

Արցախի և Հայաստանի գրողների միության անդամ եմ:

2012թ. համահայկական ուսանող-ստեղծագործող մրցույթում զբաղեցրել եմ մրցանակային առաջին տեղը:

2012թ. «Փետուր և եղեգ» բանաստեղծական շարքի համար արժանացել եմ Արցախի գրողների միության տարվա մրցանակին:

Արցախում անցկացված պոեզիայի միջազգային փառատոնի (2012թ.) դափնեկիր եմ:

2013-2016թթ. աշխատել եմ ԼՂՀ ԳՄ «Եղիցի լույս» թերթի էջադրող, պատասխանատու խմբագիր:

2013թ. Ստեփանակերտի Գրիգոր Նարեկացի համալսարանում աշխատում եմ որպես իրավագիտության ամբիոնի դասախոս, 2016թ.-ից՝ ամբիոնի վարիչ:

2014թ.-ի մայիսի 23-ին արժանացել եմ Մարիա Կոնոպնիցկայի անվան պոեզիայի եվրոպական մրցանակին:

2014-2016թթ. աշխատել եմ որպես ԼՂՀ ԳՄ նախագահի օգնական:

2015թ.-ից Բուլղարիայի գրողների միության անդամ եմ:

2016թ.-ին կազմել եւ խմբագրել եմ Արցախի գրողների միության անդամների եւ սկսնակ ստեղծագործողների արձակ, չափածո գործերից կազմված «Բառը սահմանի վրա» ժողովածուն՝ նվիրված Արցախի հանրապետության անկախության 25-ամյակին:

ՍՈՆԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մուտք 4
Երկիրս... 7
Երկիրս 8
Այնտեղ... Իմ տանը 9
Արցախ 12
Լեռներում այս... 13
Քաղաքը 14
Եռագույնի փոխարեն 15
Զոհը 16
Վերադարձածները 17
Արև որդի 18
Հայրը, որդին, որդու որդին... 19
Երբ վինվորը լեռներում է 20
Վտանգավոր է ճամփադ... 22
Մատաղիսում 23
Իմ բանաստեղծությունը 25
Ես երկնքից եմ 29
Իմ մութը 30
Բառը 32
Իմ օրը 33
Օրը 34
Գիշերային գույներ 35
Քունը 37
Գիշերային սիրախաղ 38
Ինչպես ոչ միշտ 39
Մենություն... 40
Ինձ պապաշապիկ մի հագցրեք... 41
Սարդոստայնի լռություն 43
Ուրիշ գարուն 45
Աշուն 46
Հեռացում 47
Բալմանկյուն 49
Քեզ 50
Սարսափելի զգացում 51
Կյանքի բնությունը 52
Տխրություն 54
Անհոգի 55

ԳԱՆԳՐԱՀԵՐ ԿԱՐՈՑ

Դու գիտես՝ դու ով ես 56
Հոգիս 57
Խոստովանություն 58
Փոքրիկ գաղտնիք 60
Ավագ ուրբաթ 61
Աստիճանը 63
Ամենաքաղցրը 64
Հեքիաթ 65
Ընթացք 66
Մի տխուր լուր 67
Անկատար երազ 68
Եթե հոգիները գոյություն ունեն... 69
Ես այնպիսին չեմ... 70
Պոեզիան մարդու աչքերը չպիտի լինի... 71
Լույսն ինձ միշտ բռնացնում է... 72
Քողարկված չէ ոչինչ... 73
Շրթներկ գնելուց... 74
Գրում եմ... 75
Չեմ հիշում քեզ 76
Արտասվում եմ ափերիս մեջ... 77
Դու իմ պատուհանն ես... 78
Կյանքում ամեն ինչ... 79
Քո գալը... 80
Միայն ես գիտեմ... 81
Սիրում եմ քո հայացքը... 82
Չեմ կարողանում գտնել... 83
Ժամանակը հախճապակե գավաթ է... 84
Ես... 85
Ուզում եմ... 86
Բառերդ կշիռ են... 87
Դու թևեր չունես, երազ... 88
Ամեն անգամ... 89
Բանաստեղծությունը... 90
Կյանքի տարբեր իրավիճակներում... 91
Սիրել 92
Ամեն ոք կարող է ջրել հողը... 93
Մտածեցի՝ ինչի մասին դու լռեցիր... 94
Տանգո... 95
Դու... 96
Այնպես սիրեցի... 97
Ոչ ոք... 98

ՍՈՆԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Քո կարոտը... 99
Բուռն ընթացքը... 100
Միտքը՝ չասված... 101
Երբ սպասումդ չի գերազանցում իրականությանը... 102
Ձանձրույթը... 103
Սերն ինչ է ուզում ինձնից... 104
Արդարություն 105
Սիրում եմ ծառեր... 106
Չեմ գտնում քեզ... 106
Թաքնվում ես... 106
Այն ժամ... 107
Երբ մեծ է թվում... 108
Մի օր... 109
Ջրվեժից նետվող նավակում... 110
Երբ հասկացա... 111
Ասված բառերից հետո... 112
Երբ հասնել ես ուզում... 113
Ամեն մի քայլ... 114
Անիմաստ է ապրել... 115
Բացատրություններն անհրաժեշտ են... 116
Ստով են անվում... 117
Ինձ հղիացնում ես տողերով... 118
Կվերջանար հեքիաթը... 119
Աչքերդ զուսպ... 120
Երանի օրն այդ չվերջանար... 121
Մեր լավագույն բարեկամը... 122
Մարդը հավատում է... 123
Ժպիտ եմ, որ... 124
Գույների մեջ մի գորշ կետիկ... 125
Դու ինձ չհիշես... 127
Մենությունս... 127
Երբ հանդիպեցի... 128
Երգը դողում է... 129
Անկյունում մլավում են աչքերդ... 130
Խոսում եմ սիրուց... 132
Երբ գլուխդ խանգարում է խոսել ... 133
Ես չլինեմ... 134
Կարողանայի գրել քո մասին... 135
Ձեզ թվում է... 136
Ուզում եմ սպանել քեզ իմ... 137
Ես իմ չասված բառերով... 138

ԳԱՆԳՐԱՀԵՐ ԿԱՐՈՑ

Սարի կրծքից... 139
Լույսը... 140
Մենք ժամանակի մեջ չենք... 141
Հեռանալուց առաջ... 142
Մութն ընկերացնում է... 143
Անհագ ցանկությամբ... 144
Դու մի հեռացիր... 145
Գիշերը... 146
Գիշերները կգում եմ բացակայությունդ... 147
Մարդիկ հոգնեցին քայլելուց... 148
Անապատում հայտնվածի հովանոցը... 149
Այս տերևը բառն է... 150
Երևի ոչ ոք չիմանա... 151
Կուզենայի գրել քո մասին... 152
Ես պիտի չգրեմ քո մասին... 153
Տան սառնությունը... 154
Զգալ... 155
Հնարավոր է... 156
Քո բացակայությունը... 157
Ամենաշատ վոհերն... 158
Անձրևն աղմուկով լցրեց սենյակս... 159
Մեղք եմ... 160
Ժամանակը ջնջում է հետքերն... 161
Հրապուրիչ է... 162
Քեզ հետ... 163
Պոկում եմ էջերս... 164
Մարդն ուղիղ գծով է ծերանում... 165
Անտեսանելի գանգրահերներ... 165
Եթե վայրէջքի... 166
Ես այդպես էլ չգտա քեզ... 167
Եվ դուք գեղեցկություն եք համարում... 168
Իմ լռությունը... 169
Լռությունդ... 170
Թեպետ ես վատն եմ... 171
Մերժում եմ... 172
Քո նվիրած աստղը... 173
Գնիր քեզ համար... 174
Նետիր երազանքդ... 175
Երբեք ոչ ոքի չեմ սիրել այնպես... 176

ՍՈՆԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ԳԱՆԳՐԱՀԵՐ ԿԱՐՈՏ

Խմբագիր՝ Աշոտ Գաբրիելյան
Սրբագրիչ՝ Լիանա Սանթրյան
Համակարգչային
շարվածքը՝ Սոնա Համբարձումյանի
Էջադրումը՝ Թամար Հարությունյանի
Կազմի ձևավորումը՝ Ալբերտ Բաղդասարյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$,
ծավալը՝ 11.5 տպ. մամուլ, տպաքանակը՝ 250:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
Հ.Հակոբյան, 25
Ստեփանակերտ-2017